19-25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025 ՈՒՐԲԱԹ 044(5868)

Azg Վազ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՌԱԿ-ի Համադրուած Մամուլը

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԱԾ ՄԱՄՈՒԼ

ՌԱԿ-ի Համադրուած Մամուլը կը Պահանջէ

ՀՀ Վարչապետը եւ Իշխանութիւնները Պարտին Հրապարակաւ Ամշեռնմխելիութեան Երաշխիքներ Տալ Որպէսզի Հայ Եկեղեցին Իր Հարցերը Իմ Լուծէ

Նախորդ շաբաթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Համադրուած Մամուլը հրապարակած էր իր խօսքը, ուր մատնանշելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ Վեհափառ հայրապետին հրաւիրած Եպիսկոպոսական ժողովի գումարումը խոչընդոտող հանգամանքները՝ Հայաստանի պետական իշխանութեան եւ անձամբ վարչապետ Փաշինեանին կոչ կընէր բնականոն հուն վերադարձնել յարաբերութիւնները Մայր Աթոռի հետ՝ խուսափելու համար հարցը միջազգային ատեաններ տեղափոխելու անպատուաբեր հեռանկարէն, լայն ընդունելութեան եւ համախոհութեան արժանացաւ Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին: ⇨3

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Ժողովուրդը դեն է շպրտում Նիկոլի «քարտեզը»

Ընդամենը մի քանի օր առաջ, աշխարհի տարբեր քաղաքներում տարբեր պարբերականությամբ հրատարակվող ռամկավար ու թեթեյանական մամուլի օրգանները հայերեն, անգլերեն, իսպաներեն լեզուներով հրապարակեցին, նաեւ իրենց համացանցային հարթակներով ներկայացրեցին «ՌԱԿ համադրված մամուլ» անունով հանդես եկող միավորման հայտարարությունը ուղղված վարչապետ Ն. Փաշինյանին ու նրա վարչակազմին՝ պահանջելով անձեռնմխելիության երաշխիքներ տալ Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր եպիսկոպոսներին, թվով 55 կամ 56 հոգի, որոնք մասնակցելու են, ի կարգ եւ ի պաշտոնե, Վեհափառ Հայրապետի հրավիրած Եպիսկոպոսական ժողովին: Հայտարարության գլխավոր հորդորն ու պահանջը Հայ եկեղեցուն առիթ տալն էր՝ իր հարցերը ինքն իր ներսում լուծելու, առանց արտաքին ճնշումների, առանց խոչընդոտների եւ առանց խարդավանքների, քանզի հատկապես արտաքին թեմերում ծառայող եպիսկոպոսներից ոմանք խուսափում էին Մայր աթոռ գալ, մինչ ուրիշներ առաջարկում էին, անշուշտ ո՛չ հրապարակավ, ժողովը գումարել արտասահմանյան որեւէ կենտրոնում, ինչն անընդունելի է որոշապես:

Սակայն, ինչպես ասում են՝ շաբաթը ուրբաթից շուտ եկավ, ճիշտ այն հերթականությամբ, որը գծել էր Ն. Փաշինյանը նախորդ շաբաթ իր հրապարակած «Ճանապարհային քարտեզ» կոչվածում,- Վեհափառ Հայրապետի հեռացում, կաթողիկոսի տեղապահի, իբր, ընտրություն, նոր կանոնագրքի ընդունում, որը կամ որի կետերը մատնանշել էր ինքը՝ մե՞ծն եկեղեցաբանը, ջերմեռա՞նդ հավատացյալը, մեկ անգամ եւս ընդգծելով կիզակետը Եկեղեցով իր հետաքրքրության՝ եկամուտների հաշվառում եւ «հարկային օրենսդրության ապահովման երաշխիքներ», հարկեր, տուրքեր եւայլն: Իսկ քարտեզային ճանապարհի վերջում՝ Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություն՝ ըստ իր իսկ մշակած կանոնագրի, այսինքն՝ նոր ***պոլոժենյա:*** Ի՞նչ տարբերություն՝ Նիկոլայ ցարի՞նը, թե՞ Նիկոլ վարչապետինը:

Եվ խոսքից ու քարտեզագրումից անցնելով գործի՝ Ն. Փաշինյանն իր հավաքագրած 10 եպիսկոպոսներին, որոնց իրավամբ «տիրադավ» է անվանում մեր հանրությունը, հրահանգեց վճռական հարված հասցնել Վեհափառ Հայրապետին եւ վերջնագրային լեզվով նրանից պահանջել հրաժարում: Եվ դա բավարար եղավ հավատացյալ մեր ժողովրդին նորից հանելու ոտքի, պոռթկալու, որի ականատեսն ու վկան եղանք բոլորս՝ ի տես Մայր տաճարում եւ շուրջը երեկ երեկոյան «Վեհափառ- Վեհափառ» վանկարկումով հավաքված բազմության վճռական ընդվզումին՝ թույլ չտալու որեւէ շեղում, որեւէ մեղանչում ընդդեմ Հայ եկեղեցու կանոնադրության, դարավոր ավանդույթների, չխառնվելու Եկեղեցու ներքին գործերին, մեկ անգամ եւս չոտնահարելու ՀՀ Սահմանադրությունը:

Ծագումնաբանորեն հունարեն ekklesia, եկեղեցի բառը նշանակում է հավատացյալների հավաքականություն՝ եկեղեցականներ ու ժողովուրդ ամբողջություն: Երեկ հավատացյալ մեր ժողովուրդն ասաց ի՛ր խոսքը:

Ով ականջ ունի, թող լսի:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Տիբրիդայինի դեմ պայքարի հայկականն է լավ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Մտածել, որ Թրամփի ուղին հայկական նշանակության ծրագիր է՝ ծիծաղելի է: Անգամ դա ադրբեջանական ու թուրքական նշանակության ծրագիր չէ: Ու անգամ տարածաշրջանային ծրագիր չէ, կամ միայն տարածաշրջանային ծրագիր չէ: Ադրբեջանի երկու հատվածները իրար կապող երթուղին ո՞նց կարող է հայկական նշանակության լինել, մենք սոսկ կարող ենք ինչ-ինչ օգուտներ քաղել այդ երթուղու բացումից, իսկ երթուղին միջազգային լոգիստիկ ենթակառուցվածքների մի մասն է միայն: Իհարկե՝ արեւմտյան, ամերիկյան նախագծողները կուզեին դուրս թողնել Իրանին, Ռուսաստանին, ծրագրին ինչ-որ ձեւով նրանց մասնակից դառնալուց, ու հենց այդ է հարցականի տակ դնում այդպիսի ծրագրի արագ ու անվտանգ իրականացումը: Վկան՝ Իրանի հոգեւոր առաջնորդի վերջին բացասական ձեւակերպումներն են Թրամփի ուղու վերաբերյալ, Ռուսաստանի նյարդային շարժումներն են, որոնք կարող են տարբեր միջոցներով դիմադրել այդ ծրագրի գործարկմանը:

Եվ ահա այդտեղ է, որ Հայաստանը վտանգավոր խաղերի դաշտ կարող է դառնալ՝ ընդհուպ մինչեւ տարբեր տրամաչափի լարումներ ու միջադեպեր:

Եվ առհասարակ՝ այս դիմակայությունը, որ արդեն գծագրվող ռուս-ուկրաինական համաձայնություններից հետո կարող է ուժգնանալ, կարող է կոնսերվացնել Թրամփի ուղու գործարկումը՝ հայկական հույսերն էլ հեռաձգելով: Ծիծաղելի է նաեւ այն, որ հայ պաշտոնյաներն ասեն, թե Ռուսաստանի մասնակցության վերաբերյալ ինքնարկումներ չկան: Է , հո ձեր հետ չե՞ն ինքնարկելու խոշոր պետությունների մասնակցությունն այս կամ այն ծրագրին, իրենք իրար մեջ էլ կարող են պայմանավորվել:

Նիկոլ Փաշինյանը վերջին կառավարության նիստից հետո լրագրողներին ասել է, թե Մեղրիի երկաթուղային հատվածը Ռուսաստանի վերահսկողության տակ չէ, ուստի այն պետք է հանձնվի Հայաստանին: Այնտեղ երկաթուղի չկա, եւ այն պետք է կառավարվի որեւէ մեկի կողմից, իսկ օգոստոսության հռչակագիրը նոր հնարավորություններ է բացում հայ-ռուսական հարաբերությունների համար:

Այս իմաստով, մեր կարծիքով, Ռուսաստանը հազիվ թե ինտրիգներ չբանեցնի Մեղրու հատվածում կառուցվելիք երկաթուղու հատվածի կառավարումն ունենալու համար, երբ կառավարում է հայկական երկաթուղին:

Փաստորեն այն, ինչ կուզենար անել Ռուսաստանը, հիմա անում է Արեւմուտքը՝ հարավկովկասյան տարածաշրջանային միասնական համակարգերի ձեւավորման վաղուց ծրագրված իր նոր փորձերի մեջ՝ միասնական լոգիստիկա (երկաթուղի, ավտոմոբիլային ճանապարհներ, էներգոհամակարգեր, միասնական անվտանգային մեխանիզմ եւ այլն: Հայ-ադրբեջանական խաղաղության բանակցությունները, Ադրբեջանից այժմ Հայաստան բերված խաներկու վագոն բենզինը դրա մեջ դիտարկեք): Ուրիշ բան, որ այս անգամ էլ, տարածաշրջանային միասնական համակարգերի ծրագիր իրականացնելիս հայկական շահերի հետ էլի հաշվի նստող չի լինելու: ⇨3

Թուրքերն անգամ «մտահոգվում են» մեր ժողովրդավարության անկմամբ

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Հայաստանի ընդդիմությունը «պետական հեղաշրջման» եւ «ահաբեկչության» մեղադրանքներով ճնշման տակ է»

Սույն վերնագրով հոդված է հրապարակել Ադրբեջանի պետական «Ազերթաջ» գործակալությունը՝ հղում անելով Անկարայի Հաջի Բայրամ Վելի համալսարանի դոցենտ **Լեւենթ Էրսին Օրալլիի** վերլուծությանը:

«Ընդդիմության համակարգված չեզոքացումը, զուգորդված նույնիսկ հրապարակայնորեն աջակցություն ունեցող քաղաքական գործիչներին «հակառեժիմային» պիտակավորմամբ, արտացոլում է Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների լուրջ քայքայումը», գրում է վերլուծության հեղինակ՝ իր «Քաղաքական ընդդիմության վրա ճնշումը Հայաստանում «հեղաշրջման-ահաբեկչության» մեղադրանքներով» վերնագրյալ հրապարակման մեջ, որին դեկտեմբերի 5-ին հղում է անում «Ազերթաջը»՝ անգլերեն ընդարձակ, գերմաներեն ավելի սեղմ անդրադարձով:

«Հայաստանում ընդդիմությունն աճող ճնշումների տակ է: Ամիսներ շարունակ ընդդիմադիր քաղաքական գործիչները, անկախ պատգամավորները, ակտիվիստները եւ նույնիսկ Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչները ձերբակալվել են «ահաբեկչություն», «հեղաշրջում ծրագրելու» կամ «սահմանադրական կարգի դեմ հանցագործություն» նախապատրաստելու մեղադրանքով: Դիտորդները կարծիք են հայտնում քաղաքական դրդապատճառներով դատավարությունների եւ դատական անկախության սահմանափակման մասին»: Վերլուծությունը մատնանշում է նաեւ, որ «2024-2025 թվականներին լրատվամիջոցների եւ խոսքի ազատությունը զգալի վատթարացել է, լրագրողների դեմ բազմաթիվ դատական գործեր են հարուցվել, ինչպես նաեւ արձանագրվել են սպառնալիքների եւ բռնության դեպքեր: Եկեղեցու դեմ էլ ձեռնարկվել են համակարգված միջոցառումներ, որոնք կրոնական ազատությունների խախտում են համարվում»: ⇨2

ԻԻՀ գերագույն առաջնորդի խորհրդականի խոսքի հասցեականությունը

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

Որքանո՞վ են կարեւորվում օրերս **TRIPP**-ի մասին Իրանի գերագույն առաջնորդի միջազգային հարցերով խորհրդականի հնչեցրած հայտարարությունները, եւ որքանո՞վ պետք է այդ դիրքորոշումը մտահոգի պաշտոնական Երեւանին:

Խոսքը, բնականաբար, վերաբերում է դեկտեմբերի 15-ին ԻԻՀ-ում ԻՀ դեսպան **Գրիգոր Հակոբյանի** եւ Իրանի գերագույն առաջնորդի խորհրդական **Ալիաքբար Վելայաթիի** հանդիպմանը՝ ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփի** ծրագրի շուրջ տեղի ունեցած զրույցին, որի ընթացքում Վելայաթին այդ ծրագիրը նույնականացրել է «Զանգեզուրի միջանցքի» հետ՝ նշելով, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը կտրականապես դեմ է դրան:

Ընդհանուր առմամբ, Ալիաքբար Վելայաթիի հայտարարություններն Իրանի կառավարության պաշտոնական դիրքորոշումները չեն հանդիսանում:

Իրանի պաշտոնական դիրքորոշումների մասին հայտարարությունները տարածվում են նախագահի, կառավարության անդամների (հատկապես՝ ԱԳ նախարարի) եւ կառավարության խոսնակի կողմից: Կառավարության հայտարարություններն ու որոշումները նույնպես կարող են պաշտոնական դիրքորոշումների հրապարակման համար հիմք հանդիսանալ: Սակայն Ալիաքբար Վելայաթին կառավարության անդամ չէ:

Կարեւոր է, սակայն, հաշվի առնել այն հանգամանքը, որ Վելայաթիի հայտարարությունները հաճախ արտացոլում են առաջնորդի կողմից արտաքին քաղաքականության ոլորտում ընդունելի համարվող տեսակետները կամ քաղաքականությունը (նաեւ՝ կարմիր գծերը):

Հետեւաբար, նրա խոսքը կարող է ընկալվել որպես արտաքին աշխարհին ուղղված ոչ պաշտոնական, բայց հասցեական ուղերձ:

Կարեւոր է նաեւ հաշվի առնել, որ Վելայաթիի ուղերձները պարտադիր կերպով համաձայնեցվում են երկրի գերագույն առաջնորդի հետ:

Իսկ եթե Վելայաթին իր հայտարարությունները ձեւակերպելիս հանդես է գալիս գերագույն առաջնորդի կամ պարզապես Իրանի անունից, ապա նրա ասածները կարող են նաեւ արտահայտել երկրի պաշտոնական դիրքորոշումը: Տվյալ դեպքում ուշադրություն դարձնենք զրույցի ժամանակ Վելայաթիի հնչեցրած խոսքի այս հատվածին՝ ըստ իրանական «ԻՌՆԱ» պետական լրատվական գործակալության.

«Վելայաթին անդրադարձել է նաեւ Կովկասում այսպես կոչված՝ «Թրամփի ծրագրին», այն գնահատելով որպես «Զանգեզուրի միջանցքի» նախագծից էականորեն չտարբերվող ծրագիր՝ ընդգծելով, որ «Իրանի Իսլամական Հանրապետությունը կտրականապես դեմ է դրան»:

Այս դեպքում Վելայաթին արտահայտում է ոչ թե իր, այլ ԻԻՀ-ի դիրքորոշումը:

Եւս մի կարեւոր հանգամանք. Վելայաթիի ուղերձի պաշտոնականությունն ավելի կընդգծվի, եթե պարզվի, որ ԻԻՀ-ում ՀՀ դեսպանի հետ հանդիպման նախաձեռնողը եղել է իրանական կողմը: Սակայն տվյալ հանդիպման մասին հրապարակված հաղորդագրություններից (իրանական եւ հայկական) դժվար է հստակ եզրակացությունների հանգել:

Վելայաթի-Հակոբյան հանդիպման շարժառիթը ըստ իրանցի քաղաքական մեկնաբան Մեդդի Բազարգանի

Իրանական «Շարղ» օրաթերթի քաղաքական մեկնաբան **Մեհդի Բազարգանի՝** ***«Երեւանյան ուղին՝ Իրանի ռազմավարությունը»*** խորագրով հոդվածը գրի է առնվել՝ նկատի ունենալով Իսրայելի հետ Հայաստանի վերջին շփումները եւ դրանով պայմանավորված՝ իրանական կողմի մտահոգությունները:

Քաղաքական մեկնաբանն

Իրանի գերագույն առաջնորդի գլխավոր խորհրդական **Վելայաթիի** ու Իրանում ՀՀ դեսպան **Գրիգոր Հակոբյանի** օրերս կայացած հանդիպումը նույնպես պայմանավորում է այդ շփումներով:

Հոդվածագիրը նշում է, որ ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի՝** «Թրամփի երթուղու» վերաբերյալ վերջին հայտարարությունները, ինչպես նաեւ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ **Վահան Կոստանյանի** այցը Իսրայել, կրկին սրել են Իրանի մտահոգություններն անվտանգության առումով: Ըստ հեղինակի, այս զարգացումները հանգեցրել են նրան, որ Թեհրանում կազմակերպվել է Խամենիի խորհրդական Վելայաթիի ու Իրանում Հայաստանի դեսպան Գրիգոր Հակոբյանի հանդիպումը, նպատակ ունենալով դեսպանին հիշեցնելու Իրանի կարմիր գծերը Հարավային Կովկասի եւ Հայաստանի տարածքով հաղորդակցական ուղիների հարցում:

Բազարգանի գնահատմամբ՝ Իսրայելի հետ Հայաստանի ուղղակի խորհրդակցությունների անցկացումը՝ առանց Թեհրանի նկատառումները բավարար չափով հաշվի առնելու, վկայում է հօգուտ Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի, Երեւանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների վերադասավորման մասին, ինչը բացահայտ հակասում է Հայաստանի խորհրդարանի փոխնախագահի եւ Թեհրանում դեսպանի հայտարարություններին Վելայաթիի հետ հանդիպման ժամանակ:

Ըստ հոդվածագրի, Վելայաթիի հայտարարություններից հետո, Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ **Ռուբեն Ռուբինյանը** լրագրողների հետ զրույցում նշել է, որ Հայաստանը ենթակառուցվածքային նախագծերում ամբողջությամբ հաշվի է առնում իր հարեւանների կենսական շահերը: Նրա խոսքով՝ «ոչ մի դեպքում հնարավոր չէ, որ Հայաստանում որեւէ նախագիծ հակասի ազգային ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը կամ իրականացվի երկրի լիակատար իրավասությունից դուրս: Հոդվածագիրը վկայակոչելով Ռուբինյանին՝ հավելում է. «Մենք նաեւ հաշվի ենք առնում մեր հարեւանների կենսական շահերը, իսկ Իրանի պարագայում այդ շահերը մեծապես համընկնում են Հայաստանի շահերի հետ»: Ըստ Բազարգանի, Ռուբինյանը հավելել է, որ Հայաստանը տվյալ հարցում մշտապես կապի մեջ է իր գործընկերների հետ եւ ընդգծել, որ Իրանի պաշտոնական դիրքորոշումները փոխանցվում են արտաքին գործերի նախարարության միջոցով, եւ Հայաստանը հենց դրանք է հիմք ընդունում: Նա նաեւ ասել է, որ «Թրամփի նախագիծը» մշակվել է Իրանի հստակ գծված կարմիր գծերի լիարժեք գիտակցմամբ՝ հավելելով, որ դա միայն Իրանի կարմիր գիծը չէ, այլ առաջին հերթին՝ Հայաստանի:

Հոդվածագրի կարծիքով, Իրանն այս զարգացումներին ի պատասխան փորձել է արձագանքել ակտիվ դիվանագիտության եւ տարածաշրջանային հավասարակշռման միջոցով: Բազարգանը նշում է, որ Իրանի արտաքին գործերի նախարար **Աբբաս Արաղչին** 2025 թ. դեկտեմբերի 7-ին, Վահան Կոստանյանի Իսրայել կատարած այցից մեկ շաբաթ անց, այցելել է Բաքու՝ ադրբեջանցի պաշտոնյաների հետ խորհրդակցելու եւ տարածաշրջանում դիվանագիտական հավասարակշռություն հաստատելու նպատակով, ինչպես նաեւ Թեհրանի դիրքորոշումները հաղորդակցական նախագծերի եւ միջանցքային երթուղիների վերաբերյալ, հատկապես Իրանի հյուսիսում եւ Հարավային Կովկասում, ուղղակիորեն փոխանցելու շահագրգիռ կողմերին: Արաղչիի այցի համընկնումը Կոստանյանի Իսրայել այցին հաջորդած ժամանակահատվածում, հավելում է Մեհդի Բազարգանը, ուժեղացրել է ենթադրությունները Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական նոր վերադասավորումների եւ արտաշարածաշրջանային դերակատարների ազդեցության աճի վերաբերյալ:

Հոդվածագրի գնահատմամբ, այս զարգացումները ցույց են տալիս, որ Թեհրանը ձգտում է հավասարակշռված դիվանագիտության եւ տարածաշրջանային խորհրդակցությունների միջոցով, միաժամանակ աղահովելով սահմանների անվտանգությունը, կանխել այնպիսի նախագծերի ազդեցության ընդլայնումը, որոնք կարող են պոտենցիալ սպառնալիք հանդիսանալ տարածաշրջանի կայունության համար: Այս պայմաններում Իրանի զգայունությունը «Թրամփի երթուղու» եւ Հայաստանի տարածքով Բաքու-Նախիջեւան հաղորդակցություն ստեղծելու փորձերի նկատմամբ, որպես տարածաշրջանային դիվանագիտական հավասարակշռության կարեւոր առանցք, առավել մեծ նշանակություն է ստանում:

Թուրքերն անգամ «մտահոգվում են» մեր ժողովրդավարության անկմամբ

⇨1 Անկարայի հիշյալ համալսարանի դոցենտ Լեւենթ Էրսին Օրալլիի վերլուծության համաձայն, միջազգային արձագանքը, մասնավորապես ԵՄ-ի կարծիքը մինչ օրս մեղմ է եղել: «Սա կարող է էլ ավելի նպաստել երկրում ավտորիտարիզմի զարգացմանը: Վերը նկարագրվածը ցույց է տալիս, որ Հայաստանը գնալով ավելի է հակվում դեպի ավտորիտար ուղղություն, եւ ժողովրդավարական ինստիտուտները թուլանում են: Հայաստանում այս զարգացումները ազդարարում են քաղաքական մրցակցության անհետացման, բազմակարծության խեղդման եւ հասարակության մեջ վախի ու ինքնագրաքննության տարածման մասին», գրում է Անկարայի Հաջի Բայրամ Վելի համալսարանի դոցենտ Լեւենթ Էրսին Օրալլին:

Այն, որ ժողովրդավարությունը ոտնահարող Թուրքիայում կարող է գրվել նման վերլուծություն, այնքան էլ տարօրինակ չէ՝ երկրի համալսարաններում կան հատուկենտ գիտնականներ, որոնց արտոնում են արդարամիտ վերլուծությունների շղարշի տակ հրապարակվել եւ Թուրքիայում ազատությունները հարգելու մասին կարծրացած կարծիքը վերանայել տալ: Առաջին հայացքից տարօրինակ է, որ սույն վերլուծությունն արժանանում է ավտորիտար Ադրբեջանի պետական գործակալության ուշադրությանը, որ փաստորեն խիստ մտահոգ է Հայաստանում ժողովրդավարության անկմամբ: Թե՞ չի հանդուրժում, երբ վերլուծաբանը հուշում է, որ Ադրբեջանին ավտորիտար մրցակից է հայտնվել:



Դոցենտ Լեւենթ Էրսին Օրալի

ԱԶԳ ԱՄԱՊԱՅ ԱՐԵՒ ԹԵՐԹ
ԶԱՐԹՕՆՔ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ ՊԱՅՔԱՐ
The Armenian Mirror-Spectator
Semanario Armenio SARDARABAD ՍԱՐՏԱՐԱԲԱՏ

ՌԱԿ-ի Համադրուած Մամուլը Կը Պահանջէ

ՀՀ Վարչապետը եւ Իշխանութիւնները Պարտին Հրապարակաւ Անձեռնմխելիութեան Երաշխիքներ Տալ Որպէսզի Հայ Եկեղեցին Իր Հարցերը Քննէ Լուծէ

⇨1 Այսուհանդերձ, նկատի ունենալով, որ իրերու կացութեան մէջ դրական որեւէ փոփոխութիւն արձանագրուած չէ, այլ, ընդհակառակն, առաւել թափով կը շարունակուին հակականոնական գործողութիւնները, ի մասնաւորի՝ կարգազանց կամ տիրադաւ եկեղեցականներու մասնակցութեամբ կազմակերպուող թերի եւ անընդունելի «պատարագները» զանազան սրբավայրերու մէջ, ցուցադրողական մասնակցութեամբ նոյնինքն վարչապետ Ն. Փաշինեանի եւ անոր վարչախումբին: Մինչ միւս կողմէ, հետզհետէ կը վատթարանան ցուցադրական դատավարութիւններով բանտախուցեր նետուած չորս Սրբազաններու եւ այլ եկեղեցականներու, ինչպէս նաեւ մեծ բարերար Սամուէլ Կարապետեանի եւ այլ քաղաքական բանտարկեալներու՝ արդէն իսկ դժնդակ պայմանները, անոնց առողջութիւնը, ինչ որ կը խորացնէ վախի մթնոլորտը միւս եկեղեցականներու՝ յատկապէս Եպիսկոպոսական ժողովին մասնակցելու պատրաստակամ հոգեւորականներու, անոնց ուղեկից դառնալ փափաքող աշխարհականներու վրայ: Հիմնուելով վերոյիշեալին վրայ, անհրաժեշտ կը նկատենք, կոչ կընենք եւ կը պահանջենք ՀՀ Վարչապետ Ն. Փաշինեանէն հրապարակաւ՝ Հայաստան մուտք գործելու, ՀՀ սահմաններէն ներս ազատ տեղափոխութեան, անձեռնմխելիութեան, խօսքի ու կարծիքի բացարձակ ազատութեան եւ ֆիզիկական ապահովութեան մշտական երաշխիքներ տալ Ժողովին մասնակցելու պատրաստ բոլոր եկեղեցականներուն եւ անոնց ուղեկցողներուն անխտիր, յարգելով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան համապատասխան յօդուածները, ժողովներ ու հաւաքներ կազմակերպելու ազատութեան վերաբերեալ միջազգային պայմանագիրները: Այս երաշխիքը անհրաժեշտ է որպէսզի կարելի դառնայ ակնկալել այժմ յեսածգուած Եպիսկոպոսաց եւ ի պահանջեալ հարկին՝ Ազգային-եկեղեցական ժողովները գումարուին:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Համադրուած Մամուլի անդամները, գլխաւորութեամբ իր խմբագիրներու խորհուրդին, առաջին անգամը չէ, որ հանդէս կու գայ ի պաշտպանութիւն Հայաստանեայց Առաքելական Սբ. Եկեղեցիին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածինին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ի նպաստ Հայ եկեղեցւոյ ներքին բարօրութեան, կանոնադրական իրաւունքներուն եւ համահայկական առաքելութեան:

Նմանապէս, առաջին անգամը չէ, որ կը բարձրացնէ Եպիսկոպոսաց ժողով գումարելու եւ անոր միջոցով Ազգային-եկեղեցական ժողով նախապատրաստելու եւ զայն կայացնելու հարցը, լուսաբանելու համար Հայ Եկեղեցւոյ դիմագրաւած ներքին եւ արտաքին խնդիրները, հաւատալով, որ Ազգային մեր Եկեղեցին ինքի՛ ի վիճակի՛ է օրինական միջոցներով, ստեղծուած ճգնաժամէն դուրս բերելու ինքզինքի՝ առանց արտաքին անօրինական միջամտութիւններու:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵՒՆ ՀԱՄԱԴՐՈՒԱԾ ՄԱՄՈՒԼ
ԱԶԳ (Հայաստան), ԱՊԱԳԱՅ (Մոնրէալ), ԱՐԵՒ (Եգիպտոս), ԶԱՐԹՕՆՔ (Լիբանան), ՆՈՐ ԱՇԽԱՐՀ (Յունաստան), ՊԱՅՔԱՐ (Պոսթոն), The Armenian Mirror Spectator (USA), ՍԱՐՏԱՐԱԲԱՏ (Արժանթին)
17 Դեկտեմբեր 2025

Բաքվի խաղաղասիրության առաջին հատակ քայլը հայ գերիների վերադարձն է

Ոչ ադրբեջանաթուրքական ապրանքներին

Դեկտեմբերի 18-ին, երբ Բաքվի դատարանում պետական մեղադրողը պահանջում էր Ռուբեն Վարդանյանի ցմահ ազատազրկումը, X-ում դրա մասին չծանուցեց Բեռլինում Բաքվի դեսպան Աղաեւը: Նույն օրը նա վերահրապարակեց հայրենի լրատվականներից մեկի՝ AnewZ հեռուստաընկերության տեղեկատվությունը՝ հետեւյալ բովանդակությամբ՝ «Ադրբեջանն առաջին անգամ երկաթուղով վառելիք է մատակարարել Հայաստան՝ խաղաղության գործընթացը հստակ քայլով նշանավորելով եւ տնտեսական սերտ համագործակցության համար դուռ բացելով»:

«Ազերթաջը» նույն օրվա լրահոսում մի քանի ժամվա տարբերությամբ ծանուցել էր նախ Ռուբեն Վարդանյանին ցմահ ազատազրկման մասին լուրը, ապա խաղաղության ջատագովի փաթեթավորմամբ հետեւյալը՝

«Ադրբեջանի Հանրապետության նավթային պետական ընկերությունը՝ SOCAR-ը առաջին անգամ տեղական արտադրության նավթամթերք է առաքում Հայաստան: Ադրբեջանի երկաթուղիների բեռնատար գնացքով Բաքվի տերմինալից Բոյուկ Քեսիկ կայարան է տեղափոխվում ընդհանուր առմամբ 1220 տոննա AI-95 բենզին, որ բեռնված է երկաթուղային 22 վագոնների մեջ: Այնուհետեւ բեռը Վրաստանի տարածքով կուղարկվի Հայաստան»:

Բեռլինում Ադրբեջանի դեսպան Աղաեւը, որ անցյալ շաբաթ բեռլինյան լսարանում գովերգում էր Ադրբեջանի խաղաղասիրական մղումը, գերմանացիների մոտ գլուխ գովում, թե ֆրանսա-գերմանական հաշտության համար 18 տարի է պահանջվել, իսկ հայ-ադրբեջանական հաշտությունը 5 տարի անց է իրականանում, քաջ գիտե, որ առանց Նյուրնբերգյան դատավարության հաշտություն չէր կարող կնքվել: Դրա մասին գիտեն նաեւ գերմանացիները, ողջ աշխարհը, հետեւաբար նաեւ մենք, որքան էլ պատմությունը, փաստերը մոռանալու հրահանգ տան ժողովրդավարության անունից, քրիստոնեական ներելու, հաշտվելու վեհ գաղափարը շահարկողները: Երբ Ռուսաստան- Ուկրաինա պատերազմը սկսվեց, գերմանացի քաղաքական գործիչները հանրության հետ հանդիպումների ժամանակ շեշտում էին՝ «ձմռանը կսառչենք, բայց չենք ջեռուցի մեր բնակարանները ռուսական գազով, կհրաժարվենք տաք ջրով լոգանքից անգամ, չենք հանդուրժի ագրեսորի հետ առեւտրական գործարքը, մեր արժանապատվությունը չենք վաճառում»:

2023-ին Ադրբեջանը վառելիք տրամադրեց Ստեփանակերտին, որ հայերն իրենց բնօրանից հեռանան: Մեծ ողբերգության՝ բռնկված հրդեհի, զոհերի մասին ծանուցեցին նաեւ միջազգային լրատվամիջոցները, որ Բաքվի դավադրության մասին կասկածը չհերքեցին նաեւ:

Չենք կարող արտոնել, որ «Սոքարի» հրդեհը մեր տուն հասնի: Չենքը չի կրակում, բայց պատերազմը շարունակվում է, երբ Ադրբեջանի նախագահն իր ժողովրդին վստահեցնում է, թե ավտոմեքենայով են վերադառնալու՝ իրենց «Արեւմտյան Ադրբեջան»:

Սուրբ Ծննդյան տոնին սպասողներիս համար խաղաղություն հաստատելու առաջին ցուցիչը հայ պատանդներին, գերիներին ազատ արձակելու, Հայաստան վերադարձնելու լուրն է:

Այդ Ավետիսին ենք սպասում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հիբրիդայինի դեմ պայքարի հայկականն է լավ

⇨1 Ավելին՝ Ադրբեջանը մի կողմից առավելագույնն է ուզում պոկել՝ պահանջելով մեր Սահմանադրության փոփոխությունը, այդպիսով՝ պատմականորեն վիճարկելի իրենց մոտ եղած տարածքների իրավական ապահովությունն ամրագրել փորձելով:

Հիմա այս համատեքստում եթե նայենք Հայաստանի ներսում հիբրիդային պատերազմի դեմ իշխանության պայքարին, ինչպես նաեւ Հայ եկեղեցու՝ արտահայաստանյան իրավազորությանը մեր պաշտոնյաների խեթ նայելուն, ապա ամեն ինչ տեղն է ընկնում: Մեր Սահմանադրությունը, մեր եկեղեցու երկար ձեռքը խանգարում են նաեւ միասնական տարածաշրջան- միջազգային ծրագրերին, ինչի ներհայաստանյան դրսեւորումները եկեղեցու շուրջ կատարվողն է, իրական Հայաստանի մասին խոսույթն է եւ այլն:

Հիմա, որ աշխարհակարգ է փոխվում, նոր կանոններ են հաստատվում, հիբրիդային պատերազմի նոր ալիք է ողջ աշխարհում, այդ մոդայիկ թեմայով կարելի է պաշտպանվել եւ անգամ ԵՄ -ից աջակցություն խնդրել՝ արտաքին միջամտությունից պաշտպանվելու պատրվակով առաջիկա ընտրությունների ժամանակ, ինչպես որ անսպասելիորեն արտաքին քաղաքականության գծով բարձր եվրոպաշտոնյա **Կայա Կալլասը** հայտարարեց:

Տասնհինգ միլիոն եվրո ԵՄ-ից՝ արտաքին միջամտությունից պաշտպանվելու պատճառաբանությամբ, իսկ իրականում՝ իշխանության քարոզչական կարողությունները բազմապատկելու ճարպկությամբ:

Բայց վտանգավոր ճարպկություն է, եթե հիմնավորումների մասին խոսենք:

Տեսեք՝ երկու պաշտոնյա, **Սարգիս Խանդանյանն** ու **Ռուբեն Ռուբինյանը**, լրագրողների (եւ մեր նույնպես) հարցերին պատասխանելիս շեշտադրում էին անում նախ լրատվամիջոցների՝ հիբրիդային պատերազմի կրողը լինելու մասին, որպես թիվ մեկ հիբրիդային սպառնալիք: Հետո էին անցնում կիբեռհարձակումներին ու այլ սպառնալիքներին: Ախր պատճառն ու հետեւանքը պետք է տարբերել՝ մեր լրատվամիջոցներն առկա քաղաքական դաշտի հետեւանք են, իսկ քաղաքական դաշտը՝ հենց քաղաքական պայմանավորվածությունների հետեւանք: Ստացվում է, որ հատկապես քաղաքական դաշտի դեմ է պայքարը, հատկապես ռուսամետ հատվածի, հետեւաբար՝ Ռուսաստանի, ինչը հակասում է Նիկոլ Փաշինյանի՝ հենց վերեւում ասածին:

Բայց միթե մեր անվտանգության համակարգը ինչ-որ գնահատականներ հնչեցրե՞լ է այդ առումով, ինչ-որ չափումներ արվել են՝ մեր դեմ վարվող հիբրիդային պատերազմի մասին, որ դուք այդպես ազատ, առանց դիվանագիտական պահվածքի այդ մասին հայտարարում եք՝ ինքներդ պատերազմի կողմ դառնալով եւ դիմացինին էլ ռինգ հրավիրելով, մինչդեռ ակնհայտ է, որ սա եվրոպաների կռիվն է ռուսական ուղղությամբ:

Սա անցանկալի բացվածք է, չէինք ուզենա, որ հենց Հայաստանն անխոհեմաբար դառնար Արեւմուտքի եւ Ռուսաստանի բախման տաք կետերից մեկը, ու մեր այն քաջարի եվրոպամետները (է, մեր ժողովրդի մեծ մասն, այդ թվում՝ ես, եվրոպամետ է, բայց դա չի նշանակում, որ մեր գործընկեր համարվող Ռուսաստանի հետ պետք է մեր հարաբերությունները լարվեն հիբրիդային սպառնալիքի համատեքստում), որ առանց զգուշության հիմա կոչեր են հնչեցնում, երեւի իսկական պատերազմի ժամանակ ծակերն են մտնելու: Էն է Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Լավրովն** արդեն պատասխանել է Կայա Կալլասին.«Օրերս Եվրադիվանագիտության ղեկավար Կայա Կալլասը հրապարակավ խոսացել է, որ Եվրոմիությունը «կօգնի Հայաստանին պայքարել վնասակար օտարերկրյա միջամտության դեմ, ինչպես դա արել ենք Մոլդովայում»: Անկեղծ խոստովանություն է, ինքնախոստովանական ցուցմունք»:

Կամ որ լրատվամիջոցներին եք մեղադրում հիբրիդային պատերազմի մասնակից լինելու մեջ՝ արդյոք գիտե՞ք, կողմնորոշվե՞լ եք, թե ներկա հիբրիդային պատերազմները ինչ են, ու տվյալ դեպքում՝ պետությունների՞, աշխարհաքաղաքական կենտրոնների՞ միջեւ են, թե կոնկրետ մեր փոքրիկ երկրի դեմ: Կամ միգուցե մեր ներքին դաշտում համակարգի հին ու նոր թեւերի միջե՞ւ են, որովհետեւ նոր համակարգ դեռ չի ձեւավորվել, իսկ հիբրիդային պատերազմի դեմ պայքարը ներքաղաքական ճնշումների գործիք դարձնելն առհասարակ վտանգավոր բան է երկրի անվտանգության տեսակետից:

Հիբրիդային պատերազմ արտաբերողներն ակնհայտորեն վաս գիտեն այժմյան հիբրիդային պատերազմների՝ մշտապես փոփոխվող բովանդակության մասին, ու լավ կլինի շատ դեպքերում նախկինում լրագրող եղած մեր պաշտոնյաները գոնե կարդան դրա դասագրքային բնորոշումները նոր ժամանակի համար, որոնցից ամենաշեշտադրելին այն է, որ հիբրիդային պատերազմը սովորական պատերազմի ձեւերից մեկն է, իսկ այդ նշանակում է՝ մենք պատերազմի մեջ ենք այն երկրի հետ, ում միջամտությունից պաշտպանություն ենք ակնկալել ԵՄ-ից:

Թե բա՝ պայքար հիբրիդային պատերազմի դեմ:

Օրհներգն ադագայի մեր տեսլականի բանալին է

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

*Հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի համերգը խորագրված էր «**Արքայական հունչեր, ձոներգեր**»: Ծրագրում ընդգրկված ստեղծագործությունների շարքում կային հայոց աշխարհին եւ հայ ազգին հասցեագրված մերօրյա օրհներգություններ, որոնք մեր պատմական դժվարին ուղու եւ աննկուն ոգու հավաք նկարագիրը լինելով՝ նաեւ ապագային ուղղված հայացք են՝ իբրեւ հույսի, հավատի, սիրո արահայություններ, իբրեւ ապագայի տեսլական, հոգեւոր ուղենիշ ու նաեւ պատգամ:*

Համերգին, որպես մեկնարկի խոսք, «Տաղարան»-ի գեղ. ղեկավար եւ դիրիժոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Սեդրակ Երկանյանը** ներկայացրեց երկերը, որոնք պիտի հնչեին: Իրոք որ, հարկ էր համառոտ ծանոթություն տալու առ այն, որ համերգային բաժնի առաջին բաժինը կազմված էր միջնադարի՝ արքայական կամ ազնվական ծագում ունեցող եվրոպացի հեղինակների եւ կամ արքունի կոմպոզիտորների ստեղծագործություններից: Հնագույն երաժշտությունը ներկայացնելուց զատ՝ այս համերգը, թերեւս, անուղղակիորեն հուշում էր կամ թե թելադրում՝ մշակույթի իմացությունը, բարձր արվեստին տիրապետելը, դարերի քննությունը բռնող երկեր ստեղծելու մշակույթը խորթ չպետք է լինի նաեւ մերօրյա իշխանավորներին, որոշում կայացնողներին: Այս անուղղակի հուշմանն իբրեւ ապացույց կատարվեցին XVI դարի հեղինակ, Նավառայի թագուհի, գրող **Մարգարիտ Նավարացու** երգերը, 1509 թ.-ից Անգլիայի թագավոր, երաժշտասեր **Հենրի VIII-ի**, ֆրանսիացի բանաստեղծ, քնարական երգերի եւ տաճարական պոեմների հեղինակ, ի ծնե Շամպանիայի եւ Բրիի գրաֆ, 1234 թ.-ից Նավառայի արքա **Տիբո IV-ի** (Տեոբալդո Մեծի), այլոց երկերը: Դրանց հաջորդեցին XVII դարի հեղինակ, իտալացի ջաղացպանի որդի, հետագայում՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ի «Գործիքային երաժշտության պալատական երգահանի», օպերաների հեղինակ եւ բեմադրող **Ժան Բատիստ Լյուլիի** ստեղծագործություններից մի քանիսը՝ պասակալյա «Արմիդե» օպերայից, ռիտուրնելներ, ուվերտյուր եւ սյուիտ: Հարպա լսե՛ք վերոհիշյալ հեղինակների աշխարհիկ գործերի անվանումները՝ «Նրան տեսնում են» եւ «Սիրո երգի եղանակով», «Կանաչ թեւեր», «Մեկնումն իմ ամենամեծ ցավն է», «Վարդի համբույրը»... Դրանք իրենց ապրած դարի երաժշտական արվեստի բարձրարժեք գործեր են՝ դարերի միջով մեզ հասած եւ մինչ օրս բեմերում հնչող:

Նուրբ կառույցներով, հոգեկան ապրումների արտահայտությամբ վերոհիշյալ գործերը կատարեցին «Տաղարան»-ի մենակատարներ **Լուսինե Մարկոսյանը**, **Գալինա Ցոլակյանը** եւ **Գայանե Ղամբարյանը**: Երգեհոնահարն էր **Թերեզա Ոսկանյանը**: Քնարական երգերի հնչմանը հաջորդած՝ Ժան Բատիստ Լյուլիի հինգմասանի «Ուվերտյուր եւ սյուիտ 1»-ը բարձրահունչ-հանդիսավոր էր՝ արքայական մուտքի եւ ընթացքի մտոմի պատկերացմամբ, տրամաբանված, սահուն անցումներով, պարային շարժումներին հարմար:

Սակայն միայն եվրոպական թագավորական տները չեն, որ տվել են երաժիշտներ: Ամենասիրունն ինձ համար **Խորհրդային** «Զարմանալի է ինձ» հոգեւոր-տաճարական երկը՝ հայ միջնադարյան երաժշտարվեստի կանոնականությամբ, աղոթքի պես մաքրագործող, մեղեդային եւ անկաշկանդ-կառուցիկ, ոնց ծո՞ղ ծավալուն: VIII դարի հայ կին երաժիշտը Գողթնի իշխան Վահան Գողթնացու քույրն էր: Ըստ ավանդության, «Զարմանալի է ինձ» գովքը գրել է եղբոր նահատակության առթիվ, որը Հայոց եկեղեցին կանոնացրել եւ ներառել է «Շարակնոց»-ի մեջ:

Համերգի վերջին արդեն հայոց ձոներգերի կատարմանը բեմ ելավ «Տաղարան»-ի ողջ երգչական կազմը. կանաց ձայներին միացան բարիտոն **Հովսեփ Նշանյանը** եւ տենոր **Արամ Մամիկոնյանը**:

Արամ Խաչատրյանի օրհներգը երգչական հնգյակը կատարեց՝ փոփոխված խոսքերով: Խաչատրյանական երաժշտության վեհությանը համահունչ էին հետագա գործերը: Դանիել Վարուժանի խոսքերը երաժշտական հնչում էին ստացել Խորենացու Մեծացուցէներեր շնորհիվ: Հինգերորդ դարի հայ շարականագիրների մեջ Մեսրոպ Մաշտոցից հետո երկրորդ նշանավոր հեղինակն է երեքդահայր Մովսես Խորենացին: Խորենացու շարականների շարքում են տասներկու Մեծացուցէները՝ «Անարատ կոյս», «Աստուածածին Մայր լուսոյ», «Ուրախացիր Աստուածածին», «Անթառամ ծաղիկ», «Աստուածածին սուրբ կոյս», «Զքեզ Աստուածածին», «Զքեզ կոյս եւ մայր», «Աստուածածին սրբութիւն», «Զքեզ մայր կուսութեան», «Լոյս ի լուսոյ, մայր եւ կենարար», «Որ զանճառելին ծնար», «Սիւն լուսոյ եւ ամպ հովանի»:

Դ. Վարուժանի «Անդաստանի» խոսքերը Խորենացու շարականների արվեստին հաջողությամբ համադրել էր **Արթուր Շահնազարյանը**: Աշխարհի չորս կողմերում սիրո, բարու խաղաղության հնչումն է սերմանում հայ մեծ բանաստեղծը եւ սպասում բերկրության հունձքին:

«Արեւելեան կողմն աշխարհի
Խաղաղութի՞ւն թող ըլլայ...
Ո՛չ արիւններ, քրտինք հոսին
Լայն երակին մէջ ակօսին.
Ու երբ հնչէ կոչնակն ամէն գիւղակի՝
Օրհներգութի՞ւն թող ըլլայ...»:

Համերգը եզրափակվեց «Հույս Հայաստանի» խոսքն անվամբ ստեղծագործությամբ. հեղինակն է կոմպոզիտոր **Երվանդ Երկանյանը**: Երաժշտական այս փոքրածավալ կտավն ունի իր պատմությունը: «Հույս Հայաստանի»-ն գրվել է 1991 թվականին Հայաստանի անկախության հռչակման առթիվ,- պատմում է հեղինակը.- խոսքերի հեղինակը դարձյալ ես եմ: Գրված է՝ ո՛չ որպես քայլերգ, քանի որ նպատակս այդ չէր, այլ՝ Մաղթերգ, իբրեւ հոգեւոր երգ-խոնարհում, իբրեւ օրհներգ: Գաղափարն Ազատ - Անկախ Միացյալ Հայաստան ունենալու բաղձանք - առանցքի շուրջ Հայաստանի անցյալի, ներկայի եւ ապագայի կենսականության առեղծվածը վեր հանելն է, ապրելու եւ արարելու անօտարելի տենչը, անսակարկ փափագը: Շարունակ դեպի վեր, դեպի նոր բարձունքներ հասնելու իղձը՝ արտահայտված իրար հաջորդ երեք երաժշտական նախադասությունների մեջ, հենց դա է վկայում: Իսկ երաժշտական լեզվի հնարավորինս երգեցիկ, պարզ, անպաճույճ, դյուրըմբռնելի եւ հիշվող լինելը հասարակական լայն լսարանին ուղղված լինելու հանգամանքով է պայմանավորված»:

«Թող օրհնյալ լինի ժամն այս սրբազան,
Եվ Աստված պահի, պահպանի թող նրան,
Ցնծացե՛ք, զանգեր դուք, ի լուր աշխարհի,
Ծնվեց նոր, մի ազատ Հայաստան:
Դու անցար ճամփեքով մթին ու դաժան,
Եվ բազում հերոսներ ընկան ու ելան,
Քեզ համար թափվեց շատ արյուն ու արցունք,
Որ դառնաս դու Անկախ Հայաստան:
Դարերի համար է քո ընտրած ճամփան,
Եռագույն արեւդ է շողում վրան,
Որդիներդ հեռվից պիտի եւ գան տուն,
Դու դարձած Միացյալ Հայաստան»:

Անցյալի համահավաք գնահատական, ներկային՝ լավատես հայացք, ապագայի հանդեպ՝ հուսացող եւ վճռական կեցվածք,- ողջը հարմոնիկ, վեհ հնչողությամբ, բայց ո՛չ բարձրագոչ, հուսո ճառագում, սուրբ պատարագում հայրենի հողերի վրա եւ պատգամ՝ որդոց ու սերունդներին.- ահա թե ինչպես ընկալվեց Երվանդ Երկանյանի «Հույս Հայաստանի»-ն:

Կոստան Զարյանի «Սպանիան»՝ ֆրանսերեն

Փարիզի «Թադե» հրատարակչությունը լույս է ընծայել **Կոստան Զարյանի** «Սպանիա» հատորը՝ **Ատոմ Փափազյանի** ֆրանսերեն թարգմանությամբ: Նախապես այն որպես թերթոն հրատարակվել էր Փարիզի «Նոր յառաջ» պարբերականում: Հետաքրքրական է, որ գրքի վերնագիրը ֆրանսերեն թարգմանվել է ոչ թե «Espagne», այլ բնագրի պես՝ «Spania»:

Ինչպես նշված է գրքի ծանուցման մեջ՝ «Այս փորձագրությունն ուսումնասիրում է տարագրի հոգին: Կոստան Զարյանը՝ «հայ Մալրոն», «Սպանիայով» ներկայացնում է իր ամենաինքնատիպ ստեղծագործությունը:

1930-ականների սկզբին, մեծ վտանգների սրման ժամանակ, նա գտնվում էր հիսնամյակի շեմին եւ արդեն անցել էր մի շարք կործանարար փորձությունների միջով՝ 1915 թվականի ցեղասպանությունը, օսմանների դեմ հաղթական մարտերը, որոնք հանգեցրին Հայաստանի Հանրապետության ստեղծմանը, այնուհետեւ պարտությունը քեմալական զորքերից: 1924 թվականին Զարյանն ստիպված էր կրկին լքել հայրենիքը՝ փրկվելու համար խորհրդային ռեժիմի հետապնդումներից. սա ծանր հարված էր նրա համար, որն իր նախնիների հողին կապված էր գրեթե խորհրդավոր կապով: Նա հավատում էր, որ հողն է ձեւավորում ժողովուրդներին, եւ հայ ժողովուրդն իր հողի արտացոլումն է. սա էր նրա գլխավոր գաղափարներից մեկը:



Տարագրվելով՝ Զարյանն անընդհատ փնտրում էր հայ հոգին վերագտնելու այլ ժողովուրդների ու երկրների միջոցով՝ նիցշեական մի ժեստով: Լինելով անդուլ բազմալեզու ճանապարհորդ՝ նա ընկերացել էր իր ժամանակի մեծագույն մտավորականների ու արվեստագետների հետ: Եվրոպայում նա սիրահարվեց Իսպանիային, որն իրեն ներշնչեց Հայաստանի հետ «բողոքյան» համարժեքությունների մի ցանց: Նրա ահռելի գիտելիքներն ու վերլուծությունների փայլը «Սպանիան» դարձնում են ոչ միայն հայ-իսպանական, այլեւ իր դարաշրջանի մասին մի փորձագրություն, որը հասնում է համընդհանուր մակարդակի:

Ժամանակակից կրոնագիտության պատմության հիմնադիրներից մեկը՝ Միրչա Էլիադեն, իդեալական կերպով ամփոփում է Զարյանի ջանքերն իր «Հատվածներ օրագրից» գործում (1973). «Տարագիրը պետք է կարողանա ներթափանցել իր թափառումների թաքնված իմաստի մեջ եւ դրանք ընկալել որպես այնպիսի նախապատրաստական փորձություններ, որոնք նրան կվերադարձնեն դեպի կենտրոն»:

Ի տարբերություն ժամանակակիցների մեծ մասի, Զարյանը 1962 թվականին կայացրեց յուրահատուկ որոշում և հաստատվեց Խորհրդային Հայաստանում, որտեղ էլ անցավ նրա կյանքի մնացած մասը մինչև 1969 թվականը»:

Ավելացնենք, որ մինչ այս «Սպանիան» թարգմանաբար հրատարակվել է ռուսերեն (թարգմանիչ՝ **Իրինա Կարումյան**), այս թարգմանությունից էլ՝ իսպաներեն: Մի հատված էլ թարգմանվել է գերմաներեն, սակայն մնացել է անտիպ:

«Սպանիայի» ֆրանսերեն թարգմանիչը՝ երիտասարդ ֆրանսահայ Ատոմ Փափազյանը, ապրում եւ աշխատում է Հայաստանում: Նրա ֆրանսերեն թարգմանությամբ «Նոր յառաջ»-ում լույս են տեսել նաեւ հայ գեղարվեստական եւ հուշագրական գրականության այլ նմուշներ տարբեր հեղինակներից (Լեւոն Շանթ, Զատել Եսայան, Լեւոն Մեսրոպ, Փանոս Թերլեմեզյան, Ռուբեն Դարբինյան, Կարո Սասունի), որոնք, հուսով ենք, նույնպես մի օր առանձին հատորներով կդրվեն ընթերցողի սեղանին:

ԱՐԾՎԻ ԲԱԽՇԻՆՅԱՆ

Հանճարը գոյություն ունի, եթե կա պարարտ հող...[*]

Նկարիչ Հակոբ Հակոբյանի արեւով ողողված արվեստանոցում տարբեր տարիների ընթացքում իր կերտած գեղանկարչական աշխատանքներն էին, որ շրջել էին աշխարհի տարբեր երկրներում եւ մեծ ճանաչում բերել ոչ միայն սիրելի նկարչին, այլեւ հայ ժողովրդին:

Եվ մեր զրույցը ոչ թե նկարչի աշխատանքների մասին էր, այլ հայ հանճարի գոյության առեղծվածի, հայ մշակույթի անցյալի ու ներկայի առանձնահատկությունների մասին:



- Կա՞ն արդյոք առանձնահատկություններ, որոնք առավելապես բնութագրական են հայ արվեստի եւ գրականության համար:

- Ես հատուկ պատրաստություն չունիմ այս հարցին պատասխանելու, բայց մեր մշակույթի մասին, անշուշտ, մտածել եմ: Իբրեւ նկարիչ, ավելի շատ կերպարվեստի նմուշներ նկատի ունենալով, կրնամ որոշ ընդհանրացումներ ընել, ըսել իմ տեսակետը:

Յուրաքանչյուր արվեստագետ մտածում է, թե ինչ է ինքը, որտեղից է գալիս իր ժողովուրդը, ինչով է ինքը տարբերվում այլազգի մշակույթի գործիչներից: Մեր ժողովուրդը հազարամյակների մշակույթ ունի: Ունենք սեպագիր արձանագրություններ, կան հեսթեր քարաժայռերի վրա, որոնք եկել-հասել են մինչեւ մեր օրերը: Ես մտածում եմ, որ մեր մշակութային արժեքների ճիշտ գնահատականը տալու համար այն պետք է համեմատենք հարեւան ժողովուրդների մշակույթների հետ, այս պարագային՝ համաշխարհային մակարդակով ստեղծված մշակույթի հետ: Եթե Ուրարտուի շրջանը համեմատենք Ասորեստանի, Եգիպտոսի, Պարսկաստանի, Հունաստանի մշակույթի հետ, մենք կտեսնենք, որ նրանց համեմատ մեր ստեղծածը շատ նախնական է, նույնիսկ՝ թերագ:

Այո՛, նախնական բան մը կա, երբ համեմատում ենք ուրարտական հարթաքանդակները ասորական կամ պարսկական հարթաքանդակների հետ: Նրանք իրենց բարձր տեխնիկայով հասել են մի այնպիսի նրբության, այնպիսի բովանդակության, աշխարհայացքային ընդարձակության, որ մերը նրանց կողքին դառնում է շատ պարզունակ: Սակայն դա չի ժխտում հայ հանճարի գոյությունը:

Հանճարը գոյություն ունի հայերու մեջ: Մեր արվեստը շատ ավելի փոքր է եւ քիչ՝ թե՛ իր բովանդակության եւ թե՛ ձեւի կատարելության իմաստով: Որպես օրինակ վերցնենք նկարչությունը: Ես ուզում եմ առանձնացնել 19-րդ, 20-րդ դարերը: Մինչ այդ, ըսենք, որ ամենաշատ մեզի ծանոթ արվեստը մանրանկարչությունն է: Հայ մանրանկարչությունը մեծ արվեստ է, բացառիկ գործեր կան, իսկ մանրանկարչության գագաթն, անկասկած, Թորոս Ռոսլինն է: Ուշադրություն դարձրե՞լ եք՝ Թորոս Ռոսլինի ձեռագրերում մարդկային գլուխը հազիվ եղունգի չափ մակերես է գրավում: Էկրանի վրա, երբ մեծանում է պատկերը, տեսնում ես, որ այդ փոքր մակերեսը անչափ հետաքրքիր արտայայտիչ եւ հարուստ է: Զարմանալ կարելի է՝ ինչպե՞ս է այդքան փոքր մակերեսի վրա Ռոսլինն այդպիսի արժեքավոր գործ արարել:

Ասում են՝ Վերածնունդը մեզանից սկսվեց, իտալականից երկու դար առաջ: Մի քիչ անլուրջ խոսք է: Վերածննդից դեռեւս 1000 տարի առաջ նույն իտալացիները Պոմպեյի մեջ բարձր մակարդակի հասցրին իրենց արվեստը, տեսակ մը իրենք վերածնեցին անտիկ աշխարհի գաղափարները:

Մենք՝ հայերս, ոչ մի ժամանակ չենք կարողացել մեր արվեստը այդպիսի բարձր մակարդակի հասցնել: Գուցե հիմնական պատճառներից մեկը եղել է մեր պետության տկարությունը, մեր փոքրությունը: Մեծ պետություններն ունեցել են ավելի մեծ հնարավորություններ եւ միջոցներ: Ու եթե մեր Ռոսլինը գնար Իտալիա, ապրեր Ֆլորենցիայում, կնկարեր ավելի մեծ մակերեսներ եւ կդառնար Վերածննդի երեւելի դեմքերից մեկը:

Անշուշտ, մենք պետք է ճիշտ գնահատենք մեր ունեցածը եւ այսօր վստահաբար կարող ենք ասել, որ միջնադարը մեր մշակույթը որոշ վիճակեն անդին չէ անցեր: Մենք մեր ունեցած արժեքները պետք չէ չափազանցնենք, քանի որ կնշանակե, որ առնվազն մենք չենք գիտեր օտարների արածը: Չենք կարող համեմատվել նրանց հետ: Սակայն, այս ամենով հանդերձ, կա մեկ փաստ՝ հանճարի գոյությունը: Կասկած չկա, որ այն կա նույնիսկ մեր նախնական, պարզունակ թվացող, պատանեկան, ոչ հասուն մակարդակի մեջ: Դարերով հայ արվեստում տեղաշարժ չի եղել, այն մնացել է մութի մեջ, որովհետեւ չի եղել զարգացում, որովհետեւ մեր երկիրը նվաճվել է օտարների կողմե, օտարի ազդեցությունը մեզ վրա շատ ուժեղ է եղել: Այն հաճախ թույլ չի տվել, որ հայկական որեւէ ինքնուրույն միտք գործի, թեեւ հայերը հենց այդ օտարների համար արժեքներ են ստեղծել:

Միայն 19-րդ դարի կեսերին, երբ հայ արվեստագետները շփվում են եվրոպական արվեստի, մշակույթի հետ, յուրացնում են այն, իրենք էլ ստեղծում են համաշխարհային մակարդակի արվեստի գործեր: Ահավասիկ ասոր ապացույցը, ունենք մի քանի անուններ, որոնցից մեկը Հակոբ Հովնաթանյան նկարիչն է: Հակոբ Հովնաթանյանով սկսվում է մի նոր որակ: Հովհաննես Այվազովսկին շփվելով եվրոպական մշակույթի հետ եւ միանգամից յուրացնելով այն՝ ամենաբարձր մակարդակով դրսեւորեց իր արվեստը: Նա իր ստեղծագործություններով ապացուցեց, որ հանճարը կա, եթե կան պարարտ հող եւ լավ պայմաններ: Ցարական մեծ կայսրության ուժն ուներ իրեն շուրջ, պատրաստվածություն ուներ, եւ ահիկա օգնեց, որ իր հանճարը բացահայտվի: Նա չէր գնացել այս աշխարհից, երբ եկավ Մարտիրոս Սարյանը: Իր ժամանակի մեջ, նորից շփվելով եվրոպական մշակույթի հետ, Սարյանը ցույց տվեց, որ ինքն այդ ցանկացած փարիզյան խումբին մեջ կարող էր իրեն հանգիստ դրսեւորել, որովհետեւ նա էլ ուներ հանճարի ուժը: Սրանք հայ հանճարի գոյության ապացույցներն են: Նրանց կերտած արվեստի գործերում երեւում է ուժ, որով նրանց արվեստը տարբերվում է մյուսներից: Ռուսական նկարչության մեջ Այվազովսկուն մյուսներից տարբերող ուժը հայկական ոգին է: Նույնը կարող ենք ասել Սարյանի մասին:

Այսօր, երբ ավելի քան բաց է մեր երկիրը եւ ժամանակը աշխարհի հանդեպ, ես կարծում եմ, որ շփվելը օտար մշակույթների հետ ու նաեւ մեր լրջությունը՝ դրանց մոտենալու, յուրացնելու, կրնա շատ բան բանալ հայ արվեստագետի եւ հայ մարդու մեջ: Եթե չըլլա ատիկա, ուրեմն նորեն հայ տաղանդավոր, հանճարեղ մարդիկը օտարին համեմատ երեւալու են պարզունակ ու նախնական: Հաճախ արվեստի գործ նայելիս զգում ես, որ ուժ ունենալով հանդերձ՝ ունի պակաս մի բան: Գուցե նրբության պակասն է, մեծ վարպետության, թռիչքի, աշխարհայացքի: Շփումը թույլ է տալիս հաղթահարել այդ ամենը, թեեւ այս պարագային մեկ վտանգ կա՝ այնքան մը չշփվինք, որ ամբողջովին կորցնենք մեր հանճարը նրանց մեջ:

Երբ հայ արվեստագետը ապրում է ուրիշ մշակույթի մեջ, հպարտանում ենք, որ նա ծագումով հայ է. իրականում՝ նա իր հանճարը նվիրում է օտարին: Այս դեպքում մեզ համար կարեւորն այն է, որ նա կարողանա ետ բերել օտարից վերցրածը այնպես, ինչպես Սարյանն արեց. Սարյանը եկավ Հայաստան եւ անչափ կարեւոր մի հիմք դրեց. չափանիշ ստեղծեց: Այդ մեզ համար ճակատագրական եղավ. անհատը կարողացավ ստեղծել ժողովուրդ, ուրեմն անհատը կարող է իր մեջ ունենալ այնպիսի խտացված ուժ, որով ժողովրդին ժողովուրդ է դարձնում: Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթեւը, Վռամշապուհ թագավորը ստեղծեցին հայ ժողովուրդը: Ալեքսանդր Թամանյանը եկավ եւ իր հանճարով ստեղծեց Երեւանը: Փորձենք Երեւանի մեջեն հանել Օպերայի շենքը, Կառավարական տունը, Երեւանը կդառնա շաբլոն փողոցներով բնակավայր: Կոմիտասը Բեթհովեն չէ, անշուշտ, Բախ էլ չէ եւ ոչ էլ Մոցարտ: Բայց ունի հանճարի մեծ ուժ, որին օտարները լսելիս ասում են. «Ահավասիկ հայ ըսված մի բան կա...»:

Գուցե, ընդհանուր առմամբ, ես քիչ մը չափազանցնում եմ, երբ ասում եմ, որ մենք քիչ մը նախնական ենք, տեսակ մը անմշակվածություն կա մեր մշակույթում: Ես այդպես եմ մտածում

- Ինչպիսի՞ն կուզեիք տեսնել հայ նոր արվեստն ու գրականությունը:

- Մենք ունենք կերպարվեստագետներ, քանդակագործներ, նկարիչներ, երաժիշտներ, գրողներ, որոնք, թեեւ այսօրվա շուկայական հարաբերություններու դժվար օրերին, շարունակում են ստեղծագործել, գրել, տպագրվել: Ես կարող եմ ասել, որ մեր գեղարվեստի հիմնական արժեքները ստեղծվել են 19-րդ, 20-րդ դարերում: Այսօր մենք 20 տարեկան Տերյան չունինք. 20 տարեկան Չարենց չունինք: Ես 19-20 տարեկան Տերյանին, 20 տարեկան Չարենցին, 30 տարեկան Մինասին, 30 տարեկան Սարյանին եմ սպասում: Եթե մեր ժողովուրդը նորից կարողանա ծնել այդպիսի մեծություններ, այն ատեն կարող ենք ըսել, որ մեր ժողովուրդը շարունակվում է: Մոռնալ ինչ-որ ստեղծված է եւ ստեղծել նոր արվեստ՝ անկարելի է: Ճիշտ է, մեր գրականությունը չենք կրնար համեմատել համաշխարհային, ռուսական, ֆրանսական գրականության հետ, այդ բանին հնարավորությունը մենք չունինք: Նրանք մեծ ժողովուրդներ են, մեծ պետություններ, մեծ հովանավորներ ու մեծ կապեր ունին, եւ մտավորականներն էլ շատ ավելի ուրիշ պայմաններուն մեջ են աճում ու զարգանում: Սակայն մենք ստեղծել ենք հիմնավոր արվեստ, գրականություն: Անշուշտ, մեր գրականությունը մեծություն մը չէ, բայց արժեքավոր է: Մենք Տերյանի, Չարենցի, Մեծարենցի, Թումանյանի պես բանաստեղծներ ունինք, որոնք դրել են հիմքը անչափ գեղեցիկ արվեստի: Մնում է միայն, որ մեր նոր սերունդն ապացուցե, որ ինքը շարունակողն է նրանց. ինքը պետք է զարգացնի, ծաղկեցնի նրանց ստեղծածը: Ես դրա մեջ եմ տեսնում ելքը: Եթե այդ արեցինք, կշարունակենք ԼԻՆԵԼ: Եթե ասենք, որ մենք ավելին գիտենք, մենք նրանցից ավելի լավ կարող ենք ստեղծագործել, եթե այսպես պիտի խոսենք, շատ բան կկորցնենք, քանի որ հիմա քաոսային վիճակ մը կա, քիչ մը շփոթվածություն կա մտավորականության մեջ. նման պարագաներուն օգտվում են միայն միջակները: Իսկ նրանք երեւում են, որովհետեւ չկա մյուսը՝ տաղանդավորը: Այդ իմաստով մեր արվեստի, մշակույթի մեջ այսօր չեմ տեսնում բարձր մակարդակի արվեստագետին, որն օժտված է ոչ միայն տաղանդով, հանճարով, այլ նաեւ իր մարդկային նկարագրով: Ատիկա այս շրջանին չեմ տեսնում, սակայն հավատում եմ, որ Նա պիտի գա... Սրանք հարցեր են, որոնց մասին շատ կարելի է խոսիլ, խորհրդածել, եւ շատերը պետք է խոսին, խորհրդածեն:

Հարցազրույցը վարեց՝
ԿԱԲԻՆԵ ՄԵՍՐՈՊՅԱՆԸ

[*] Հարցազրույցն արվել է 1996 թվականին:

Արդյո՞ք Իրանը գնում է Թուրքիայի հետքերով

Իրանի քաղաքական եւ հասարակական շրջանակներում վերջին ամիսներին ակտիվացել է մի հարց, որը մինչ այժմ համարվել է գաղափարական սկզբունք՝ պարտադիր գլխաշորի հավանական մեղմացումը կամ չեղարկումը: Այս թեման դարձել է հանրային լայն քննարկումների առանցքը՝ արտահայտելով ինչպես հասարակական դժգոհությունները, այնպես էլ իշխանությունների ներսում տեղի ունեցող հնարավոր վերադասավորումները: Սա ակամա հիշեցնում է Թուրքիան՝ 20-րդ դարի սկիզբը, երբ **Քեմալ Աթաթուրքի** բարեփոխումները նպատակ ունեին սահմանափակել կրոնական ազդեցությունը եւ հասարակությանը տալ աշխարհիկ ուղղություն:

Քեմալ Աթաթուրքի նախաձեռնած բարեփոխումները միտված էին ոչ միայն կրոնական սահմանափակումների թուլացմանը, այլեւ հասարակական կյանքի հսկայական արեւմտականացմանը: Կինը դիտարկվում էր որպես նոր հանրապետական գաղափարախոսության խորհրդանիշ: Կանայք, որոնք հրաժարվում էին գլխաշորից եւ կրում էին արեւմտյան հագուստ, ներկայացվում էին որպես «իրական հանրապետականներ»՝ ընդունակ մարմնավորելու պետության նոր ինքնությունը:

1936 թ. հունվարի 8-ին Պարսկաստանի Ռեզա Շահը նախաձեռնեց բարեփոխում, որով սահմանվեց կանանց գլխաշորից հրաժարվելու եւ եվրոպական հագուստի կիրառումը խրախուսող պետական քաղաքականություն՝ որպես Իրանի սոցիալ-մշակութային արդիականացման ծրագրի մաս:

Պահպանողական շերտի համար այդ նոր նախաձեռնությունը դժվար ընդունելի էր: Միեւնույն ժամանակ բարեփոխումները հնարավորություն տվեցին բազմաթիվ կանանց ավելի ակտիվորեն ներգրավվել հասարակական կյանքում:

Նույն տարվա Թուրքիա այցից հետո Ռեզա շահը իր ելույթներում ընդգծեց, որ այժմ կանայք կարող են օգտվել մայրության արտոնությունից դուրս նաեւ այլ իրավունքներից: Այս խոսքերն արտացոլում էին ոչ միայն Իրանի կանանց իրավունքների վիճակը, այլեւ հասարակության վերաբերմունքը կնոջ դերին այդ ժամանակաշրջանում:

Իրանը, ի տարբերություն Թուրքիայի, մինչ օրս ներկայացվում է որպես խիստ կրոնական պետություն, որի միջազգային ու ներքին ինքնությունը հիմնված է իսլամական արժեքների վրա: Գլխաշորը ծառայում է ոչ միայն որպես կրոնական պարտավորություն, այլեւ որպես պետական գաղափարախոսության առանցքային բաղադրիչ:

Միեւնույն ժամանակ պետք է ընդգծել, որ պահպանողական մուսուլմանների համար Ղուրանի պահանջները չեն ենթարկվում փոփոխության:

Ղուրանում կնոջ ծածկված լինելը համարվում է պարտադիր եւ ընկալվում որպես հավատքի ու բարոյական պատասխանատվության խորհրդանիշ, ուստի գլխաշորի պարտադրանքի մեղմացումը հնարավոր է դիտարկել ոչ թե որպես կրոնական մեկնաբանության փոփոխություն, այլ՝ պետական քաղաքականության քայլ, որը կարող է առաջացնել հասարակական ընկալումների տարբերություն եւ լարվածություն:

Չնայած տարբեր ժամանակաշրջաններին եւ պատմական իրողություններին, հարց է առաջանում՝ արդյո՞ք Իրանը, թեկուզ անուղղակիորեն, փորձում է կրկնել Թուրքիայի արեւմտականացման որոշ տարրեր.

Թուրքիայում աշխարհիկացումը բացահայտ պետական քաղաքականություն էր՝ հստակ նպատակներով:

Իրանում պատշաճական հայտարարություն չկա եւ փոփոխությունները, եթե լինեն, ավելի շատ թիրախավորում են հասարակական տրամադրությունների կառավարումը, քան՝ արժեքային հեղափոխությունը:

Թեհրանը դժվար թե հրաժարվի իր իսլամական ինքնությունից, սակայն կարող է ընտրել «մեղմացման» ռազմավարություն ներսում ճնշումները նվազեցնելու կամ արտաքին ճնշումների պայմաններում ավելի ճկուն դիրքավորվելու համար:

1979 թվականի Իրանի հեղաշրջումից հետո, երբ տապալվեց Ռեզա Շահ Փահլավիի ռեժիմը եւ իշխանությունը անցավ իսլամական հոգեւոր շրջանակներին, գլխաշորի կրումը դարձավ պարտադիր: Մինչդեռ Թուրքիայում իրավիճակն այլ է. այսօր **Ռեջեփ Թայիփ Էրդողանը** շատ է մեծարում Քեմալ Աթաթուրքին, սակայն հենց Աթաթուրքն է առաջինը արգելել կանանց գլխաշոր կրելը: Միեւնույն ժամանակ, Թայիփ Էրդողանի կինը ծածկված է, ինչը ցույց է տալիս, թե որքան բարդ է հասարակական ու քաղաքական նորմերի համադրությունը: Այս հակադրությունն ընդգծում է, որ քաղաքական դիրքորոշումները եւ հասարակության ընկալումները հաճախ կարող են լինել խիստ բազմաշերտ եւ հակասական:

Այսպիսով, Իրանը այսօր չի կրկնում Թուրքիայի ուղին բառացիորեն, սակայն որոշ նմանություններ նկատելի են՝ հատկապես այն մասում, որտեղ կանանց վարքագիծն ու արտաքին տեսքը դառնում են քաղաքական գործընթացների հնարավոր կառավարելի գործիք: Եթե Թուրքիայում գլխաշորը քաղաքականացվեց՝ այն արգելելով, ապա Իրանում այն քաղաքականացվում է՝ պարտադրանքը քննարկման դնելով: Երկու դեպքում էլ փոփոխությունները անմիջական ազդեցություն ունեն կանանց հասարակական դիրքի եւ մասնակցության վրա, ինչը առաջացնում է հասարակական լայն քննարկումներ եւ տարակարծություններ:

ԱՆՆԱ ՂԱԼՍՏՅԱՆ
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Տնտեսագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի

ՄԱՇԱԳՐԱԿԱՆ

Վախճանվեց եգիպտահայ գաղութի նահապետը

Պերճ Թերզյան. Եգիպտոսի հայագաղութի նահապետը, որ վերջին 25-30 տարիներին լինելով Թեմական խորհրդի անդամ, երբեմն՝ ատենապետ, հաճախ նաեւ ՀԲԸՄիության շրջանային վարչության ղեկավար, իսկ հաճախ էլ՝ առանց որեւէ պաշտոնի, բոլո՛ր պարագաներում, պետական մարմինների մոտ թե այլուր միշտ եւ շարունակ տեր է կանգնել հայագաղութի շահերին, օգտակար դառնալով նաեւ, ՀՀ անկախությունից հետո, Կահիրեում մեր դեսպանությանը:

Լինելով հարգված գործարար, առեւտրային տպարանի սեփականատեր, միաժամանակ՝ քաջահմուտ արաբերեն լեզվին, եգիպտական բարքերին, պետական գրասենյակների ավանդական գործելակերպին, նրա խորհուրդները որոշիչ են եղել մեր ազգային, հասարակական կյանքի կազմակերպական գործերում, իսկ տագնապալի ժամանակներում, ինչպես 2010-ականներին, երբ ծայրահեղ լարվեցին հարաբերությունները Եգիպտոսի արմատական մահմեդականների եւ 8-10 միլիոն հաշվող ղպտի քրիստոնեական համայնքի միջեւ, նա բնավ չլքեց մայրաքաղաքի կենտրոնական հրապարակներից մեկում գտնվող եւ Գալուստ Գյուլբենկյանի նվիրատվությամբ վեր խոյացող մեր առաջնորդանիստ տաճարն ու հարակից գրասենյակը: Նա իսկապես հարգված էր տեղի պետական պաշտոնյաների ու տարբեր համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից որպես պարկեշտ, լուրջ հեղինակություն: Նրա խոսքը հարգում էին:

Միաժամանակ՝ նա ջատագովն ու պաշտպանն էր եգիպտահայ մամուլին, հատկապես «Արեւ» օրաթերթին, իսկ վերջին տարիներին կանոնավոր պարբերականությամբ լույս էր ընծայում «Տեղեկատու» բուլետենը, որտեղ հրապարակում էր իր հոդվածները, որոնցից վերջինը նվիրված էր արեւմտահայերենի պահպանման դժվարին խնդրին:

Փառասեր չէր Պերճ Թերզյանը, հետեւաբար՝ ոչ էլ ցուցամոլ: Լուրջ եւ լրջախոհ՝ սիրում էր գործել անաղմուկ, բայց արդյունավետ: Նրա աշխատանքը տարիների ընթացքում տվել է շոշափելի արդյունքներ մի այնպիսի մարզում, որին մեր ազգայիններից միայն քչերն են եղել հետամուտ՝ ծագումով հայաստանյան կալվածների ու շինությունների վերատիրացում՝ հնարավորության սահմաններում եւ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում: Եվ հենց նրա ջանքերով է, որ Հայ եկեղեցին եւ ՀԲԸՄիությունը վերստին տեր են դարձել հանգամանքների բերումով կամ 50-ականների պետականացման հետեւանքով իրենց կորցրած ունեցվածքներին: Այդ կալվածներից մեկը, թերեւս ամենից նշանավորը, Զանիկ Չաքրի վիլլան էր, որը փաստաթղթերի կարգավորումից հետո, Եգիպտոսում ՀՀ դեսպան Էդուարդ Նալբանդյանի պաշտոնավարության ժամանակամիջոցում, նվիրվեց Հայաստանի Հանրապետությանը որպես դեսպանատուն գործածելու պայմանով:

Պատկերացում կազմելու համար ասենք, որ այդ վիլլան, բավական մեծ առանձնատունն իր գողտրիկ այգով, գտնվում է օտարերկրյա դեսպանատներին հատկացված եւ անվտանգային զոնա համարվող փողոցի վրա, որտեղ միայն մեր դեսպանությունը ունի ամառան շոգ երեկոներին, պաշտոնական բացօթյա ընդունելություններ կազմակերպելու հնարավորություն՝ կանաչ գազոնային տարածքում՝ նախանձը շարժելով հարեւանությամբ գտնվող մեծ, շատ հարուստ երկրների դեսպանությունների:

Հայրենասեր մարդ էր Պերճ Թերզյանը: Տարին առնվազն մեկ անգամ, տիկնոջ՝ Սեդայի հետ նա այցելում էր Երեւան եւ հանդիպումներ ունենում տարբեր մտավորականների հետ, ներկա լինում համերգների, մշակութային միջոցառումների:

Վերջին անգամ, երբ ոսկրահոդային հիվանդությունը խորացած էր նրա մոտ, անվասայլակով, հոգատար եւ ուշադիր իր կողակցի ուղեկցությամբ նա կրկին այցելեց Երեւան,- աւա՜ղ, վերջին անգամ,- մասնակցեց Պրահայում լույս տեսնող «Օրեր» ամսագրի 25-ամյակին նվիրված ԹՄՄիության կազմակերպած երեկոյին:

Հարուստ կենսագրություն, ամուր հետագիծ թողած մարդ է Պերճ Թերզյանը, կառուցողական ոգով, միշտ հանրօգուտ աշխատանքի հետամուտ: Նա գնաց միանալու այն հույլին, այն փառավոր սերնդին, որը կերտեց այժմ նոսրացած եգիպտահայ գաղութի մտավորական, լրագրողական, գրական, քաղաքական, կուսակցական, բարեգործական փառավոր անցյալը, ազգային դեմքը:

Հանգիստ իր ոսկորներին:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Ի՞նչ կաղ կարող է ունենալ Հայաստանը «Abraham Accords»-ի հետ

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին հաղորդակցության փորձագետ

Հակառակ այն փաստին, որ մի քանի ամիս առաջ Մ. Նահանգների նախագահի խորհրդական **Սթիվեն Ուիթկոֆը** (Steven Witkoff) հայտարարեց, թե Հայաստանն ու Ադրբեջանը հնարավորություն ունեն միանալու «Աբրահամի համաձայնություններին» (Abraham Accords), դեռեւս պարզ չէ, թե 98 տոկոսով քրիստոնյա ազգաբնակչություն ունեցող Հայաստանը ինչպես կարող է մաս կազմել այդ կառույցին:

Թրամփի վարչակազմի միջնաժամկետ նախաձեռնություններից մեկը հանդիսացող այդ կառույցը հնարավոր ուղիներ է որոնում համագործակցության եզրեր գտնելու Իսրայելի եւ իսլամական աշխարհի միջեւ, հեռահար նպատակ ունենալով խթանել խաղաղությունն ու բարգավաճումը տարածաշրջանում: Այս համաձայնությունները սկզբնավորվեցին նախագահ **Թրամփի** առաջին իշխանության օրերին, որպեսզի հնարավոր լինի կարգավորել Իսրայելի հարաբերությունները այնպիսի պետությունների հետ, որոնք պատմականորեն թշնամական կամ ոչ բարեկամական դիրքորոշում ունեն նրա նկատմամբ: Գործընթացի առաջին փուլը տեղի ունեցավ 2020-ին, երբ Իսրայելը կարգավորեց հարաբերությունները Միացյալ Արաբական Էմիրությունների, Բահրեյնի, Սուդանի եւ Մարոկկոյի հետ՝ Մ. Նահանգների անմիջական միջնորդությամբ:

Նախաձեռնության ճարտարապետը **Ջարեդ Կուշներ** էր (Jared Kushner)՝ նախագահ Թրամփի փեսան, որ դարձավ բանակցությունները վարող գլխավոր անձնավորությունը: 2020-ի ընտրություններում Թրամփի պարտվելուց հետո, նախաձեռնության նշանակությունը նվազեց եւ Իսրայելի նկատմամբ Վաշինգտոնի արտաքին քաղաքականությունը որոշակի վերանայման ենթարկվեց: Սակայն 2024-ին Թրամփի քաղաքական ասպարեզ վերադարձով վերականգնվեց դրանց կարեւորությունը, այս անգամ առավել ընդարձակելով դրանց շրջանակները եւ նախատեսելով կա՛մ կարգավորել հարաբերությունները Իսրայելի եւ իսլամական պետությունների ավելի լայն շրջանակների հետ, կա՛մ էլ խորացնել արդեն գոյություն ունեցող կապերը:

Մինչ «Abraham Accords»-ը սկզբնական փուլում նախատեսված էր կարգավորել հարաբերությունները Իսրայելի եւ արաբական պետությունների միջեւ, հետագայում նպատակներից մեկը դարձավ կարգավորել ու խորացնել Իսրայելի հարաբերությունները Միջին Արեւելքից դուրս գտնվող մեծամասնությամբ մահմեդական բնակչություն ունեցող այլ երկրների հետ, որոնք գտնվում են Կենտրոնական Ասիայում եւ Հարավային Կովկասում (օրինակ՝ Ղազախսանը եւ Ադրբեջանը) եւ որոնք հետաքրքրություն են ցուցաբերել միանալու:

Ադրբեջանի հնարավոր մասնակցությունը հիմնականում խորհրդանշական բնույթ կրելու, որովհետեւ Ադրբեջանի եւ Իսրայելի հարաբերությունները առանց այն էլ ռազմավարական են: Ադրբեջանը Իսրայելից գնում է միլիարդավոր դոլարի արժողությամբ զենքեր, փոխարենը Իսրայելին մատակարարելով գազ եւ նավթ: Երկու պետությունների միջեւ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992-ին եւ մինչ օրս մնացել են բարձր մակարդակի վրա: Այդ պատճառով էլ «Abraham Accords»-ին միանալու Ադրբեջանի շահագրգռվածությունը հիմնականում նպատակ ունի քաղաքական վարկանիշ նվաճել Թրամփի վարչակազմից եւ հաստատել լրացուցիչ կապվածության ուղիներ ինչպես Մ. Նահանգների ընդհանրապես, այնպես էլ Թրամփի թիմի հետ: Իսրայելի եւ Ադրբեջանի հարաբերությունները արդեն այնքան սերտ են, որ շատ դաշնակից ու գործընկեր պետություններ կնախանձեին: Անհավանական է, որ այդ բացառիկ սերտ գործընկերությունը էլ ավելի «ջերմանա» կառույցին միանալու հետեւանքով:

Բաքուն ցանկանում է զարգացնել առավել սերտ հարաբերություններ Մ. Նահանգների հետ, որպեսզի կարողանա ավելի անկախ քաղաքականություն վարել՝ ի դեմս Մոսկվայի: Նման քայլով Ադրբեջանը փորձում է մի կողմից հավասարակշռել իր քաղաքական հարաբերությունները Ռուսաստանի հետ, եւ մյուս կողմից նվազեցնել Մ. Նահանգներից սպասվող մարդու իրավունքների խախտման վերաբերյալ հնարավոր ճնշումները: Նաեւ մեղմել Վաշինգտոնի հայկական լոբբիստական ընկերություններից ակնկալվող հնարավոր ճնշումների եւ պատժամիջոցների ռիսկերը: Ներքին ճակատում Թրամփի վարչակազմի հետ ռազմավարական հարաբերությունների ձեւավորումն ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ նախագահ **Բայդենի** իշխանության օրերին դրանք բավական լարված էին, ինչը բացասական ազդեցություն էր թողնում ներքին քաղաքական դինամիկայի վրա: Վաշինգտոնի գնահատմամբ Ադրբեջանը որպես ամենահարուստ պետություն Հարավային Կովկասում կարեւոր գործընկեր է եւ՛ որպես էներգապաշարներ մատակարարողի, եւ՛ որպես Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում հակակշռելու առումով: Ադրբեջանը անմիջական հարեւանն է Ռուսաստանի, եւ ինչպես տեսանք վերջին մի քանի տարիների ընթացքում, կարող է բազմաթիվ մարտահրավերներ առաջացնել Մոսկվային: Որպես օրինակներ կարելի է նշել ռուս խաղաղապահների դուրսբերումը Լեռնային Ղարաբաղից եւ լարվածության թթնոլորտը, որն ստեղծվեց ադրբեջանական ինքնաթիռի կործանումից հետո: Ավելին՝ ամրապնդելով Թուրքիայի, որպես թուրքական պետությունների ամենահզորը, Ադրբեջանի եւ տարածաշրջանի թուրքական այլ պետությունների դերակատարությունը, Վաշինգտոնը հավելյալ հակակշռողական պատնեշ է ստեղծում ընդդեմ Ռուսաստանի եւ Չինաստանի, միաժամանակ իր ազդեցության ոլորտում պահպանելով Թուրքիային, ՆԱՏՕ-ի իր ռազմավարական դաշնակցին:

Հայաստանի համար «Abraham Accords»-ին միանալը գուցե տրամաբանական է, հաշվի առնելով ՀՀ-Իսրայել հարաբերությունների պատմական լարվածությունը (Երուսաղեմի հայկական մշակութային ժառանգության հանդեպ շարունակական ոտնձգությունները), Ադրբեջան-Իսրայել կապերի ռազմավարական բնույթը եւ Հայաստանի բարեկամական հարաբերությունները Իրանի հետ: Չի կարելի բացառել, ուրեմն, որ Հայաստանը միանա այդ կառույցին, եթե Վաշինգտոնը նման առաջարկ ներկայացնի: Այդպիսի սցենար հնարավոր կլինի, եթե «Abraham Accords»-ի տրամաբանությունը ընդլայնվի եւ բացի Իսրայել-արաբական կամ մահմեդական երկրների հետ հարաբերությունների կարգավորումից ընդգրկի որոշ քրիստոնյա երկրներ եւս: Առայժմ կարծես Երեւանը սպասողական դիրքերում է:

Չի կարելի բացառել, որ երբ Ուիթկոֆը նման միտք հղացավ, չէր ակնկալում, որ Հայաստանն ու Ադրբեջանը միանալով կառույցին կլուծեն իրենց խնդիրները: Այդ ժամանակ կարեւոր էր, որ Մ. Նահանգների ռազմավարական դաշնակից Իսրայելը քիչ խնդիրներ ունենա ոչ միայն արաբական, այլեւ ընդհանրապես իսլամական եւ ոչ-իսլամական պետությունների հետ: Վաշինգտոնը պարտավորվում է ցույց տալ, որ ոչ միայն արաբական, այլեւ Ադրբեջանի եւ Ղազախսանի նման թյուրքական պետություններ ցանկանում են խորացնել հարաբերությունները Իսրայելի հետ՝ հեռահար նպատակ ունենալով հաշտեցնել Իսրայելին եւ Թուրքիային:

Անգլ. բնագրից թարգմ.
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

Իմաստաբանական բառարան

Բարեւն Աստծունն է

Բարեւը բնիկ հայկական բառ է եւ **Հր. Աճառյանի** կարծիքով՝ կազմված է *բար* («բնություն», «բնավորություն») արմատից՝ ածականակերտ «ի» մասնիկի հավելումով:

Թուրքերը բարեւելու համար արաբերենի բառապաշարից անվերադարձ վերցրել են *merhaba* բառը եւ սեփականաշնորհել այն:

Բարեւելու համար ադրբեջանցիներն էլ պարսկերենի միջնորդությամբ արաբերենից վերցրել են *salam*-ը եւ գլուխ են գովում, թե իրենց լեզուն աշխարհի ամենահարուստ լեզուն է եւ փոխառությունների կարիք չունի:

Մեր դավանակից վրացի հարեւանները ողջունելու համար ընտրել են *gamarjoba* բառը, որը բառացիորեն նշանակում է «հաղթանակ», «հաջողություն»: Ի դեպ, դրա *marj* արմատը բնիկ վրացերեն՝ քարտվելական բառ է:

Մեր դրացի պարսիկներն էլ ողջունելու համար նույնպես օգտագործում են արաբերենից վերցրած *salam* բառը, որը, ինչպես գիտեք, նշանակում է «խաղաղություն»:

Բայց հարեւան Իրանում արաբերեն *salam*-ից բացի՝ բարեւելու համար հին պարսկերենից իբրեւ ժառանգություն պարսիկներին է հասել նաեւ *dorud* բառը, որի նախնական իմաստն է «առողջություն»: Իսկ մենք, փոխելով այդ բառի իմաստն ու արտասանությունը, այն դարձրել ենք «դրվաս» եւ ծանրաբեռնել բազմաթիվ իմաստներով՝ գովեստ, գովք, գովաբանություն, ներբող, ներբողաբանություն, փառաբանություն, բարեբանություն եւ խնկարկություն՝ շարունակելով ողջունելու համար օգտագործել հայերեն «բարեւ» բառը: (Չնայած երբեմն շեղվում ենք եւ բարեւի փոխարեն օգտագործում ռուսերեն *привѣтъ* բառը):

Մենք ասում ենք՝ «բարեւն Աստծունն է», ու բարեւում բոլորին: Մեկը մյուսի ձեռքն է սեղմում, մեկն էլ երեսն է համբուրում, մեկ ուրիշն էլ, եթե դիմացինը ուխտադրուժ հոգեւորական չէ,՝ աջն է համբուրում:

Կա նաեւ բարեւի մի տեսակ, երբ մտերիմ մարդիկ, հիմնականում երկրի ղեկավարները, գրկախառնվում են ու միմյանց մեջքն են թփթփացնում:

Այս օրերին նորաձեւ է նաեւ մոտավորապես «թխի գա» շարժումը հիշեցնող՝ վեր բարձրացրած ափերի հպումով բարեւելու սովորույթը:

Եթե բարեւելու ցանկություն ունեցող անձը զլանում է փողոցն անցնել ու ձեռքով բարեւել, հեռվից մի ձեռքն է բարձրացնում ու թափահարում: Նույն հեռավորությունից կարելի է նաեւ բարեւի հետ մեկտեղ՝ ձեռքի ճկուն շարժումով համբույր փոխանցել:

Եթե բարեւել ցանկացող անձը որոշում է զանգվածներին ողջունել, երկու ձեռքն է բարձրացնում ու թափահարում՝ ընդօրինակելով Սուրբ Պետրոսի հրապարակին հարող պատշգամբից հավատացյալներին ողջույնի խոսք ասող Հռոմի պապին:

Բարեւը կարող է նաեւ գրավոր տեսք ունենալ, որը հայերեն կոչվում է «բարեւագիր»:

Օրվա տարբեր ժամերին արտասանվող «բարեւը» կարող է հնչել «բարի լույս», «բարի կեսօր» եւ «բարի երեկո» ձեւերով: Բայց գիշերվա բարեւն իր մեջ մի փոքր շեղում ունի եւ հուշում է, որ օրն ավարտվել է, ու պետք է քնել:

Բարեւը կարող է, նեղացածության պատճառով, չընդունվել եւ հետ վերադարձվել: Հիշենք թեկուզ իր յարի անտարբեր վերաբերմունքի դառնությունը ճաշակած Գուսան **Շահենի** տրտունջը.

Այսօր ես իմ յարին տեսա, թուխ մազերը օլորած էր,
Բարեւ տվի, բարեւս չառավ, գուցե ինձնից խռոված էր...

Բարեւը կարող է նաեւ քաղաքականացվել եւ ընտրազանգվածներին համախմբող միջոց դառնալ: «Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանի «Բարեւ» նախընտրական արշավը դրա վկայությունն է:

Պարույր Սեւակն էլ երազում էր, որ բարեւի շնորհիվ սահմանները դառնան թափանցիկ, եւ վիզա ստանալու պատճառով դեսպանատներում կուտակումներ չառաջանան.

...Եվ կուզենայի,
Շա՜տ կուզենայի,
Որ այս բառն իրոք (խոսքը բարեւի մասին է) դառնար անձնագիր
Աշխարհում համայն,
Ամենքի համար...

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ցորենիացը մեր հանապազորյա

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Որերորդ օրն է հայաստանյան միջավայրը ավանդական դարձած քաղաքական կողմնորոշումից թեքվում է դեպի ցորենայինը, որը հանրության մի զգալի հատվածն առավել է ողջունում: Ավաղ սպասումները, թե ինչու է Երկիր մոլորակի չորս կողմերում պարզ գործընթաց համարվող այս երեւույթը նման դրսեւորում ստանում, ցանկալի դիտարկման չի ենթարկվում, անգամ այն պարագայում, երբ այն արժանանում է դաշնակից երկրի անվտանգային ծառայություններից մեկի ղեկավարի կտրուկ ու կոշտ գնահատականին: Իմա, ՀԱՊԿ անդամ մի այլ երկրից ցորենի ներմուծումը փորձ է կտրվել Ռուսաստանի Դաշնությունից եւ հնարավոր է թեքվել Ուկրաինայի կողմը: Գուցե այդպես է, գուցե ոչ, սակայն շարքային հայաստանցուն դա առավել քիչ է մտահոգում: Նրան պարզագույն մի հարց է հետաքրքրում ինչո՞ւ հողա-ջրա-ջերմային առավելագույն հնարավորությունների առկայության պայմաններում երկրի պարենային ապահովության ու անվտանգության առաջնահերթություն համարվող հացահացամթերքների արտադրությունում հիմնական հումք հանդիսացող ցորեն մշակաբույսը մեր հողերում չի աճեցվում: Սննդի նշված տեսակին ՀՀ առկա 3 մլն բնակչության կարիքները բավարարելու համար հարկ է տարեկան արտադրել 600 հազար տոննայի սահմաններում ցորեն, որը կարելի է ստանալ ՀՀ 450 հազար հեկտար վարելահողերի 100 հազար հեկտարի վրա ցորեն աճեցնելու շնորհիվ: Այսպիսին է պարզ հաշվարկը Երկիր մոլորակի չորս կողմերում. պարարտ հողի վրա ցանում ես ցորենի 200 կիլոգրամ սերմացու, ջրում-խնամում ես, մոտ 150 օր անց ստանում հասունացած ցորենը հնձել-հավաքելու իրավունք, 1 հեկտարի հաշվով 6000 կիլոգրամ արդյունքով:

Ասված թվերն ու գործընթացը վերցվել են համաշխարհային վիճակագրությունից, դրանք թե հյուսիսում ու հարավում են իրականացվում, թե արեւելքում ու արեւմուտքում, անկախ մարդկանց մաշկի գույնից ու կրոնական պատկանելիությունից: Եթե 2000 թվականին ցորենի համաշխարհային արտադրությունը 588 մլն տոննա էր, 2021-ին այն հասել է 771 մլն տոննայի, որը վերցրել ենք ԱՄՆ-ում 1868 թվականից մինչ օրս տպագրվող «Համաշխարհային փաստեր» տեղեկատուից: ՀՀ-ում պատկերը լրջագույնս մտահոգիչ է, քանզի 2002 թվականի 415 հազար տոննայից, 2004 թվականի 457 հազար տոննայից հիմա ունենք հազիվ 100 հազար տոննա ցուցանիշ, որ-տիպի թիվ հրապարակում է ՀՀ վիճակագրության կոմիտեն:

Ավաղ, խնդրով մտահոգվող չկա, թեեւ ինչ-ինչ քայլեր ձեռնարկվում են, սակայն հակառակ տրամաբանությամբ: Այսպիսին էր օրինակ երկրի գյուղատնտեսության համար պատասխանատու ՀՀ էկոնոմիկայի նախարարի արած այն հայտարարությունը, թե հայաստանյան վարելահողերում ցորեն ցանելը նպատակահարմար չէ, քանզի ցանքսն ու վերջնարդյունքը շահույթ չեն երաշխավորում: Թե ով ինչ թվեր էր նախարարին ներկայացրել, քանզի հայտնի է, որ հողագործներից շատերն են տարին տարվա վրա ցորենի ցանքս իրականացնում, հեռուստաէկրաններից էլ չեն խուսափում հեկտարից միջին 6 տոննա բերքից խոսում:: Պարզապես գործընթացը աշխատանք է պարտադրում, որոշակի պայմանների պահպանում, որտեղ ցանկալի է տեսնել մարզպետարանների համապատասխան մասնագետներին, հանձինս գյուղվարչությունների աշխատակիցների: Նրանք են կոչված պետության ներկայացուցիչները լինելու գյուղական համայնքներում, քանզի ՀՀ էկոնոմիկայի նախարարության վարչությունների ու բաժինների պետերն ու այլ աստիճանների մասնագետներն ընդհանրապես գյուղհամայնքներում չեն լինում, որեւէ մեկն էլ նրանցից դա չի պահանջում: Ինչո՞ւ. մի պարզ պատճառով՝ ծախսեր է պարտադրում, գործուղում կոչվող ուղեվարձ, գիշերակաց, սնունդ, որը նախարարությունը չունի, պետությունը չի նախատեսում, իսկ իրենց հաշվին մասնագետները ծախսեր կատարել չեն պատրաստվում, էնտուզիաստներ չեն:



Ցորենի արտադրության հարցում հետաքրքրական տեղեկատվության ենք հանդիպում արդեն հիշատակված ամերիկյան տեղեկատուում: Ասենք, Երկիր մոլորակի 1,4-մլրդանոց բնակչություն ունեցող այնպիսի երկրներում, ինչպիսիք են Չինաստանն ու Հնդկաստանը, աճում է հետաքրքրությունը ցորենի սպառման հանդեպ, առաջինում 60 կգ-ից կազմելով 66 կգ, երկրորդում՝ 45 կգ-ից 65 կգ: Առաջին հայացքից մեծ թվեր չեն, սակայն բազմապատկեք մոտ 3 մլրդ-ով, անհանգստությունը կուրվագծվի: Թեեւ Հնդկաստանում վերջին 20-ամյակում ցորենի արտադրությունը 76 մլն տոննայից հասել է 110 մլն տոննայի, Չինաստանում էլ ավելի բարձր ցուցանիշ է արձանագրվել՝ 100 մլն տոննայից 137 մլն տոննա, այսուհանդերձ ցորենի համաշխարհային շուկայում անակնկալները չեն բացառվում, մեր պաշտոնյաների այն հանգստությունը, թե ցորեն կգնենք այլ պետություններից՝ կարող է եւ չաշխատել: Նկատենք, որ զգալի աճ է արձանագրվում մուսուլմանական աշխարհում, ՀՀ վարչապետն էլ խոսել է 5 մլն բնակչությամբ Հայաստանի Հանրապետության մասին: Իսկ հողային եւ հատկապես վարելահողային տարածքները չեն աճում, որոշ դեպքերում անգամ նվազում են: Սրանք լրջագույն մարտահրավերներ են, որոնց, ուզենք թե ոչ, բախվելու ենք մոտակա տարիներին:

Ի զորո՞ւ ենք արդյոք առաջիկայում քննարկել անվտանգային նման խնդիրները, ցույց կտա մեզանում ներքին ներուժ հռչակվող պատկերացումը:

Այրենք հավատով:

18.11.2025թ.

Հայազգի պարադիրները եռալեզու մի հատորում

Այս տարի Փարիզի «Այվազյան էդիսիոն» հրատարակչությունը սահմանափակ տպաքանակով հրատարակել է «**Պարել հիշատակներից անդին. հայ մշակութային ժառանգությունը եւ մարմնականությունը (հարավ-կովկասյան մոտեցումները ստեղծագործական պրակտիկային)**» գիրքը: Այն բովանդակում է հոդվածներ եւ հարցազրույցներ անգլերեն ու ֆրանսերեն, մի քանիսն էլ՝ հայերեն:

Գիրքը կազմված է երեք բաժնից: Առաջինը («Աղակենտրոնացված մշակույթ՝ վերապրում, տոն, սփռում») ընդգրկում է պարուհի, պարադիր եւ պարագետ **Ալին Տերտերյանի** (Փարիզ) «Փոփոխված արմատականություն. Հասմիկ Թանգյանը եւ պարը որպես անխուսափելի դիմադրության ձեւ» հոդվածում ներկայացրել է հայաստանցի պարուհի **Հասմիկ Թանգյանի** «հուզանգ ուզանգ» պարային բեմադրությունը՝ դիտարկելով այն որպես հակազդեցություն կամ դիմադրելու կերպ ավանդապաշտությանը: Այս բաժնի մյուս հոդվածում հայազգի պարադիր-պարուհի **Թեյա Մալդումը** (Լոնդոն) ներկայացրել է իր հայասիանյան փորձառությունը եւ իր «Իմ Ջանա» ինտերակտիվ ինստալացիան:

Երկրորդ բաժնում («Պարագրել հիշատակները. հետազոտություն եւ փոխանցում») պարագետ **Քրիստինա Գիլինգեր-Կոռեա Վիվարը** (Վիեննա) հանդես է եկել «Արեւելքի պատկերի ինքնագիտակից մարտահրավերը. Մոդեռն էքսպրեսիոնիստ պարուհի Արմեն Օհանյանը» հոդվածով, իսկ ազգությամբ վիետնամուհի փարիզաբնակ պարի եւ գեղագիտության հետազոտող, թատերագիր **Շուան-Լան Բուի Կիակը** արեւելքցի կնոջ իր դիտանկյունից վերլուծել է Ալին Տերտերյանի «Կանայք» պարադրությունը: Բաժնի երրորդ նյութն է պարուհի, խորեոգրաֆ եւ պարուսույց **Իրիս Կարայանի** (Աթենք) հետ շարժման հետազոտող եւ արվեստագետ **Իոաննա Բիլիի** (Լոնդոն) հարցազրույցը, որ վերաբերում է մասնավորապես պարային մեթոդաբանությունների կիրառություններին:

Երրորդ գլուխը՝ «Հայկականություն եւ մարմնավորություն. Ժամանակակից սփյուռքյան գործադրությունները», ներկայացնում է հայազգի խմբագիր, գրող **Վալերիա Դելա Վալլեի** (Լոնդոն-Նյու Յորք-Միլան-Փարիզ) զրույցը տեսողական արվեստագետ, պատկերազարդող **Ալիշա Սոֆիայի** (Լոս Անջելես, Փարիզ) հետ՝ վերջինիս արվեստում մասնավորապես մշակութային ժառանգության դրսեւորումների վերաբերյալ: Այս բաժնում փորք անդրադարձ կա նաեւ փարիզցի կինոբեմադրիչներ **Մարգո դը Կերանգաշի** եւ **Օսկար Վիգյեի՝** Ալին Տերտերյանի մասնակցությամբ «Անմոռուկ» տեսաֆիլմին:

Գրքի խմբագիրն է **Ալին Տերտերյանը**, ձեւավորող նկարիչը՝ **Ուորեն Մանվելյանը**, հեղինակների գծանկարները ստեղծել է «Այվազյան էդիսիոնի» հիմնադիր տնօրեն **Գեւորգ Այվազյանը**: Նյութերի մի մասն արեւմտահայերեն է թարգմանել ավանդական հայկական պարի ուսուցիչ, թարգմանիչ **Արագա Մեհրաբին** (Փարիզ): Իր գործածած մի շարք հայերեն բառեր, նորաբանություններ նա տվել է առանձին ցանկով (օրինակ, արբարժան՝ iconic, իգապաշտան՝ feminist, վաճառանիշ՝ brand, արուեստանոցաբնակ՝ artistic residence եւ այլն), որոնց մի մասը կարելի է շրջանառել: Գրքի հրատարակության հովանավորն է Գալուստ Կյուլբենկյան հիմնարկությունը:

Ա. Ք.

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակության ԼԴ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն (գովազդ)
հեռ. **010 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 18.12.2025, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: